ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

(ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ)

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ **3**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **4**

1. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ **5**

1.1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ 6

1.2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 9

1.3. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 11

1.4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՆԵՐ 14

1.5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ 17

1.6. ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ 19

1.7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 22

2. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ **25**

2.1 ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ 25

2.2 ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ 28

2.3 ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 30

2.4 ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 32

2.5 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ 36

2.6 ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ 42

2.7 ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ 44

ԱՄՓՈՓՈՒՄ **46**

ՀԱՎԵԼՎԱԾ 1 ..... **49**

ՀԱՎԵԼՎԱԾ 2 ..... **52**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ **55**

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ **55**

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

- Չինաստանում բռնկված կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19), որն իրենից ներկայացնում է նոր կորոնավիրուսի հետևանքով առաջացած ծանր սուր շնչառական սինդրոմ, 2020 թվականին վերաճել է համաճարակի, որի մասին Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը (ԱՀԿ) առաջին անգամ հայտնել է 2019 թվականի դեկտեմբերի 31-ին: Համաճարակի հետևանքով աշխարհի գրեթե բոլոր երկրներում կիրառվել են և՛ տնտեսական գործունեության տեսակների, և՛ մարդկանց տեղաշարժի որոշակի կամ ամբողջական սահմանափակումներ (lockdown): Վերջիններս բացասական ազդեցություն են թողել համաշխարհային տնտեսության գրեթե բոլոր ոլորտների վրա, ինչի արդյունքում 2020 թվականին աշխարհի համախառն ներքին արդյունքը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 3.3%-ով:
- Համաճարակը լայն տարածում է գտել նաև Հայաստանում, ինչի ադյունքում տնտեսության հիմնական ոլորտների գծով անկում է արձանագրվել: Համաճարակի բացասական հետևանքների մեղմացման նպատակով ՀՀ կառավարության կողմից ևս կիրառվել են տնտեսական գործունեության և մարդկանց տեղաշարժի սահմանափակումներ: Վերոնշյալ շոկի հետևանքներին գումարվել է նաև արցախյան 44-օրյա պատերազի բացասական տնտեսական հետևանքները: Արդյունքում, 2019 թվականի համեմատ 2020 թվականին ՀՆԱ–ն նվազել է 7.4%-ով: Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության գնահատականների՝ համաճարակի և պատերազմի ագրեգացված բացասական ազդեցությունը Հայաստանի 2020 թվականի համախառն ներքին արդյունքի մակարդակի վրա կազմել է 14.0% (կամ շուրջ 916 մլրդ դրամ 2019 թվականի գներով):
- Տնտեսական գործունեության և մարդկանց տեղաշարժի սահնամափակումները և՛ Հայաստանում, և՛ այլ երկրներում, հանգեցրել են աշխատանքի հնարավորինս հեռահար սկզբունքով կազմակերպման, ինչն իր ազդեցությունն է ունեցել ինչպես աշխատանքային պայմանների, այնպես էլ՝ աշխատանքի արտադրողականության վրա:
- Հայաստանի Ամերիկյան Համալսարանի հարցումների համաձայն՝ հեռահար աշխատանքի արտադրողականության առումով աշխատողների շուրջ կեսը նշել է, որ այն արդյունավետ է, իսկ մոտ 25% նշել է, որ հեռահար աշխատելն անարդյունավետ է: Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության օպերատիվ գնահատականների՝ 2020 թվականին 2019 թվականի համեմատ աշխատանքի արտադրողականությունը աճել է 1.2%-ով (գնողունակության պարիտետով՝ 2.3%%-ով):
- ՀՀ կառավարության կողմից մշակվել և իրականացվել են համավարակի բացասական հետևանքների չեզոքացմանն ուղղված 25 ծրագրեր: Վերոնշյալ ծրագրերը նվազեցրել են համաճարակի բացասական ազդեցությունները, մասնավորապես, համաձայն Համաշխարհային Բանկի գնահատականների՝ մեղմել են աղքատության մակարդակի աճը մոտ 1 տոկոսային կետով:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կորոնավիրուսային հիվանդությունն (COVID-19) իրենից ներկայացնում է նոր կորոնավիրուսի հետևանքով առաջացած ծանր սուր շնչառական սինդրոմ: Այն առաջին անգամ հայտնաբերվել է Չինաստանի Հուբեյ նահանգի Ուհան քաղաքում շնչառական հիվանդությունների բռնկման ֆոնին, ինչի մասին Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը (ԱՀԿ) առաջին անգամ հայտնել է 2019 թվականի դեկտեմբերի 31-ին: 2020 թվականի հունվարի 30-ին ԱՀԿ-ն COVID-19-ի բռնկմամբ պայմանավորված հայտարարել է առողջապահության բնագավառում գլոբալ արտակարգ իրավիճակ, իսկ 2020 թվականի մարտի 11–ին՝ համաճարակ: 2021 թվականի հուլիսի 12-ի դրությամբ, որպես COVID-19-ի հետևանք, հաստատվել է հիվանդության ավելի քան 186 միլիոն դեպք և ավելի քան 4 միլիոն մահ, ինչն այդ համաճարակը դարձնում է պատմության մեջ ամենամահաբեր համաճարակներից մեկը:

2020 թվականի փետրվարին համաճարակի լայն տարածմամբ պայմանավորված՝ շատ երկրներ փակել են իրենց սահմանները, ինչն ինքնամեկուսացման և տնտեսական գործունեության որոշ տեսակների սահմանափակումների հետ միասին հանգեցրել է համաշխարհային տնտեսության գրեթե բոլոր ոլորտների ցուցանիշների անկմանը:

Հայաստանում կորոնավիրուսային հիվանդության առաջին դեպքը գրանցվել է 2020 թվականի մարտի 1–ին: Համավարակի կանխարգելման նպատակով Հայաստանի կառավարությունը մարտի 16-ին հանրապետությունում հայտարարել է արտակարգ դրության ռեժիմ, ինչից հետո մարտի 24-ից մինչև մայիսի 14-ն ընկած ժամանակահատվածի համար սահմանվել են խիստ մեկուսացման սահմանափակումներ: Դադարեցվել են գրեթե բոլոր ցամաքային և օդային փոխադրումները: 2021 թվականի հուլիսի 12-ի դրությամբ հաստատվել է հիվանդության ավելի քան 226 հազար դեպք և ավելի քան 4 հազար մահ:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին արցախա-ադրբեջանական հակամարտության շփման գծի երկայնքով սկսվել են մարտական գործողություններ, ինչը 1994 թվականից ի վեր ամենալայնածավալ զինված հակամարտությունն է Հայաստանի և Ադրբեջանի միջև: Մի քանի անհաջող փորձերից հետո 2020 թվականի նոյեմբերի 10-ին կողմերի միջև հրադադար է հաստատվել:

Վերոնշյալ երկու շոկերը ունեցել են բազմաթիվ բացասական սոցիալ–տնտեսական հետևանքներ, որոնք իրենց ազդեցությունն են թողել տնտեսության գրեթե բոլոր ոլորտների վրա:

1. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

1.1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ

1. Աշխարհի տարբեր հատվածներում կորոնավիրուսի հետևանքով սահմանված ինքնամեկուսացումը և տնտեսական գործունեության որոշ տեսակների սահմանափակումներն իրենց բացասական ազդեցությունն են թողել համաշխարհային տնտեսության գրեթե բոլոր ոլորտների վրա, ինչը հատկապես զգալի է զբոսաշրջության, առողջապահության և առևտրի ոլորտներում: Արդյունքում՝ աշխարհի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 2020 թվականի առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 1.9%-ով: ՀՆԱ-ի անկումն իր գագաթնակետին է հասել 2020 թվականի երկրորդ եռամսյակում՝ կազմելով 8.9%: 2020 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակներում արձանագրվել է անկման զգալի դանդաղում (անկման ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 1.9% և 0.8%):

2. Համաշխարհային ՀՆԱ-ի անկումը պայմանավորված է և՛ մասնավոր սպառման, և՛ ներդրումների ծավալների կրճատմամբ: ՀՆԱ-ի անկման մեջ առավել մեծ է մասնավոր սպառման բացասական նպաստումը, սակայն 2020 թվականի երրորդ եռամսյակում վերոնշյալ բաղադրիչի անկումը զգալիորեն դանդաղել է, ինչը հիմնականում պահանջարկը զսպող գործոնների ազդեցության թուլացման հետևանք է: Ի համեմատություն մասնավոր սպառման ծավալների, ներդրումների ծավալներն ավելի դանդաղ են վերականգնվում: Թերևս բացառություն է կազմել Չինաստանը, որի ներդրումների նպաստումը համաշխարհային ներդրումների աճին 2020 թվականի երկրորդ եռամսյակում կազմել է 0.9 տոկոսային կետ, իսկ երրորդ եռամսյակում՝ 1.6 տոկոսային կետ:

Գրաֆիկ 1.1
Մասնավոր սպառման և ներդրումների նպաստումը ՀՆԱ-ի աճին ըստ եռամսյակների, տոկոսային կետ



Աղբյուր՝ ԱՄՀ [1]
Տվյալները ընդգրկում են աշխարհի ՀՆԱ-ի 73.8 %, ներդրումները – հիմնական կապիտալի համախառն կուտակում

3. Համաձայն Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) գնահատումների՝[1] 2020 թվականին աշխարհի համախառն ներքին արդյունքը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 3.3%-ով, զարգացած երկրներում՝ 4.7%-ով, իսկ զարգացող երկրներում՝ 2.2%-ով:

Գրաֆիկ 1.2
Համախառն ներքին արդյունքի աճն ըստ աշխարհի և երկրների խմբերի, %



Աղբյուր՝ ԱՄՀ [2]
2021-2022 թվականների ցուցանիշները կանխատեսումներ են

4. Համաձայն ԱՄՀ-ի կանխատեսումների՝ 2021 թվականին աշխարհի ՀՆԱ-ն նախորդ տարվա նկատմամբ կաճի 6.0%-ով, իսկ 2022 թվականին՝ 4.4%-ով:[2] 2021 թվականի ընթացքում համաշխարհային տնտեսության ակնկալվող ակտիվացումը հիմնականում կպայմանավորվի համավարակի հաղթահարման ուղղությամբ երկրների կողմից իրականացվող միջոցառումներով, մասնավորապես՝ կորոնավիրուսի դեմ պատվաստման ընթացքով, ինչպես նաև ինքնամեկուսացման սահմանափակումների թուլացմամբ: Կանխատեսվում է, որ երկրների միջև տնտեսական վերականգնման աճի տեմպերը զգալիորեն կտարբերվեն՝ պայմանավորված բժշկական ծառայություններից օգտվելու հասանելիության, պետական աջակցության ծրագրերի արդյունավետության, ինչպես նաև երկրների միջև տնտեսության կառուցվածքային տարբերություններով:[3]

5. 2021 թվականին զարգացած երկրներում կանխատեսվում է ՀՆԱ-ի միջինում 5.1% աճ: Ըստ առանձին երկրների՝ 2021 թվականի ՀՆԱ-ի աճի կանխատեսումները հետևյալն են. ԱՄՆ՝ 6.4%, Ճապոնիա՝ 3.3%, իսկ Գերմանիա՝ 3.6%, Միացյալ Թագավորություն՝ 5.3%:

[1] Տե՛ս, IMF, April 2021, Managing Divergent Recoveries:
[2] Տե՛ս, IMF, April 2021, World Economic Outlook. Managing Divergent Recoveries:
[3] Տե՛ս, IMF, January 2021, World Economic Outlook update:

6. 2021 թվականին զարգացող երկրներում կանխատեսվում է ՀՆԱ-ի միջինում 6.7% աճ: Զարգացող երկրներից Չինաստանի ՀՆԱ-ի աճը կկազմի 8.4%, իսկ Հնդկաստանինը՝ 12.5%: Չինաստանի տնտեսության լավատեսական հեռանկարները հիմնականում պայմանավորվում են այլ երկրների համեմատ ինքնամեկուսացման սահմանափակումների ավելի արագ թուլացմամբ, պետական աջակցության միջոցների արդյունավետությամբ և արտահանման ծավալների կայունությամբ:

7. Այլ զարգացող երկրներում տնտեսական աճի հեռանկարներն առավել անորոշ են, ինչն այդ երկրներում համաճարակի հետագա տարածման միտումների, առողջապահական համակարգի գերծանրաբեռնվածության, համաճարակից առավել տուժած ոլորտներից (օրինակ՝ զբոսաշրջություն), ինչպես նաև ֆինանսավորման արտաքին աղբյուրներից (այդ թվում՝ դրամական փոխանցումներից) առավել բարձր կախվածության հետևանք է:[4]

Գրաֆիկ 1.3
Մի շարք երկրների ՀՆԱ-ի աճը, %



Աղբյուր՝ ԱՄՀ [2]
*2021 թվականի ցուցանիշները կանխատեսումներ են

[4] Տե՛ս, IMF, October 2020, World Economic Outlook: A Long and Difficult Ascent:

1.2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

8. Համաշխարհային առևտրի ծավալներն, ապրանքների միջազգային մատակարարման դադարացմանը զուգընթաց, 2020 թվականին կտրուկ նվազել են, ինչը հիմնականում պայմանավորված է երկրների միջև սահմանների փակմամբ:[5] Համաձայն ԱՄՀ-ի տվյալների՝ 2020 թվականին համաշխարհային առևտրի ծավալները նախորդ տարվա նկատմամբ նվազել են 8.5%-ով: Համաշխարհային առևտրի ծավալների նվազումը մասամբ պայմանավորված է եղել տեղական ընկերությունների կողմից արտադրության գործընթացներն իրենց երկիր տեղափոխմամբ՝ հետագայում օտարերկրյա արտադրողներից կախվածությունից խուսափելու համար: Այս փոփոխության հետևանքով ակնկալվում է, որ 2025 թվականին օտարերկրյա ուղղակի ներդրումների մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ի մեջ (1.35%) վերջին տասնամյակի միջին ցուցանիշից ցածր կլինի:

Գրաֆիկ 1.4
Համաշխարհային առևտրի ծավալի աճը նախորդ տարվա նկատմամբ (ձախ առանցք) և համաշխարհային օտարերկրյա ներդրումները ՀՆԱ-ի նկատմամբ (աջ առանցք), %



Աղբյուր՝ Ճանապարհորդությունների և Զբոսաշրջության Համաշխարհային Խորհուրդ; ԱՄՀ գնահատումներ

9. Կորոնավիրուսի առանձնահատկություններից ելնելով՝ համաճարակի ազդեցությունն առավել բացասաբար է անդրադարձել մարդկային անմիջական շփում պահանջող ծառայությունների, քան ապրանքային պահանջարկի վրա:[6] Ապրանքային առևտրի ծավալների անկումն, ի տարբերություն ծառայությունների առևտրի ծավալների, եղել է համեմատաբար ավելի մեղմ:

[5] Տե՛ս, WB, 2021, Global Economic Prospects:
[6] Տե՛ս, WB, 2021, Global Economic Prospects:

Գրաֆիկ 1.5
Ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրի աճի տեմպն*
ըստ ամիսների, %



Աղբյուր՝ ՀԲ [1]
*Տվյալները ինդեքսավորված են 2020 թվականի փետրվարի նկատմամբ

10. Համաձայն Առևտրի Միջազգային Կենտրոնի տվյալների՝ 2020 թվականին համաշխարհային արտահանումը կազմել է 17.3 տրլն ԱՄՆ դոլար՝ նվազելով նախորդ տարվա նկատմամբ 7.6%-ով: Արտահանման ծավալների նվազմանը հիմնականում նպաստել է առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող հետևյալ ապրանքատեսակների արտահանման անկումը. հանքային վառելանյութեր, նավթ, վերգետնյա տրանսպորտային միջոցներ, սև մետաղներ, ձուկ և խեցգետնավորներ, ծխախոտ, ոգելից և ոչ ոգելից խմիչքներ:

Գրաֆիկ 1.6
2020թ. համաշխարհային արտահանման աճն ըստ խոշոր ապրանքատեսակների, նախորդ տարվա նկատմամբ, %

Աղբյուր՝ Առևտրի Միջազգային Կենտրոնի տվյալների բազա

11. Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կանխատեսումների համաձայն՝ 2021 թվականին արտահանման և ներմուծման ծավալների անկումից կտուժեն բոլոր երկրները, սակայն անկման ցուցանիշներն ըստ առանձին երկրների էականորեն տարբեր կլինեն: Ակնկալվում է, որ ավելի խոր անկում կարձանագրվի այն երկրներում, որտեղ արտահանման, ինչպես նաև ՀՆԱ կառուցվածքում մեծ է զբոսաշրջության մասնաբաժինը:

12. Միջազգային կազմակերպությունների կողմից 2021 թվականին նախորդ տարվա նկատմամբ համաշխարհային առևտրի ծավալների աճի կանխատեսումներն են՝

- Առևտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ)՝ 8.0% աճ,
- Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ)՝ 8.4% աճ,
- Համաշխարհային բանկ (ՀԲ)՝ 5.1% աճ:

Ներդիր 1. Միջազգային առևտրի աճի հեռանկարները

Միջազգային առևտրի հեռանկարները շարունակում են մնալ անորոշ, պայմանավորված ոչ միայն համաճարակի հետագա ընթացքով, այլ նաև երկրների միջև գոյացող առևտրային հարաբերություններով: Չնայած այն փաստին, որ 2020 թվականի սկզբին Չինաստանի և ԱՄՆ–ի միջև հաստատվել է առևտրային համաձայնության կնքման գործընթացը, այդ երկրների միջև մի շարք ուղղություններով դեռ առկա է զգալի լարվածություն: 2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվել է Միացյալ Թագավորության և Եվրամիության միջև հարաբերությունների անցումային շրջանը, ինչի արդյունքում կողմերն եկել են համաձայնության, որ Միացյալ Թագավորության և Եվրամիության միջև ապրանքների տեղաշարժերի համար չեն գործի որևէ սակագներ և քվոտաներ: Ըստ համաձայնագրի՝ ծառայության ոլորտի համար ևս չի ստեղծվի որևէ խոչընդոտ, ինչը դրական կանդրադառնա միջազգային առևտրի վրա:
Միջազգային առևտրի հետագա զարգացման վրա ազդող դրական գործոններից կարելի է նշել 2020 թվականի հուլիսի մեկից Կանադայի, Մեքսիկայի և ԱՄՆ–ի միջև առևտրային համաձայնության ուժի մեջ մտնելը, ինչը մոտ ապագայում կնպաստի առևտրային հեռանկարների լավացմանը: Դրական գործոններից է նաև 2020 թվականի նոյեմբերի 15–ին կնքած տարածաշրջանային համապարփակ տնտեսական համագործակցության համաձայնագիրը (ՏՀՏՀ), որը կնքվել է Հարավարևելյան Ասիայի Պետությունների Ասոցիացիայի և Չինաստանի, Ճապոնիայի, Հարավային Կորեայի, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի միջև: Այսպիսով, ՏՀՏՀ-ը կարող է իր չափի և մասշտաբի հաշվին զգալի քանակական և որակական ազդեցություն ունենալ և՛ տարածաշրջանային և՛ գլոբալ մակարդակներում, ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ կտրվածքներով:

1.3. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

13. Համաշխարհային զբոսաշրջության ոլորտը 2020 թվականին ապրել է պատմության մեջ ամենամեծ ճգնաժամը՝ պայմանավորված կորոնավիրուսի բռնկման հետ: Համաձայն Միավորված Ազգերի Համաշխարհային Զբոսաշրջային Կազմակերպության (ՄԱՀԶԿ) տվյալների՝ միջազգային զբոսաշրջային հոսքերը 2020 թվականին կազմել են 397 միլիոն՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 73%-ով, ինչը պայմանավորված է գրեթե բոլոր երկրների կողմից սահմանված ճամփորդական սահմանափակումներով և պահանջարկի զանգվածային անկմամբ: Կորոնավիրուսի պատճառով առաջացած զբոսաշրջության արտահանման եկամուտների կորուստները գնահատվում են մոտ 1.3 տրլն ԱՄՆ դոլար,

ինչը գրեթե 11 անգամ գերազանցում է 2009 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով առաջացած կորուստները:[7]

Գրաֆիկ 1.7
Միջազգային զբոսաշրջային հոսքերը, մլն մարդ



Աղբյուր՝ ՄԱՀԶԿ
2020 թվականի տվյալները նախնական են

14. Համաձայն ՄԱՀԶԿ-ի ամսական տվյալների՝ 2020 թվականի փետրվարից դիտարկվել է միջազգային զբոսաշրջային հոսքերի անկում, ինչն իր նվազագույնին է հասել ապրիլ ամսին՝ 2019 թվականի ապրիլ ամսվա նկատմամբ նվազելով 97%-ով: Սահմանափակումների թուլացմանը զուգընթաց 2020 թվականի հունիսից միջազգային զբոսաշրջային հոսքերի որոշակի վերականգնման միտումներ է արձանագրվել՝ նախորդ տարվա նկատմամբ պահպանվելով զգալիորեն ցածր մակարդակում:

[7] Տե՛ս, UNWTO, January 2021, COVID-19 AND TOURISM 2020: A year in review:

Գրաֆիկ 1.8
Միջազգային զբոսաշրջային հոսքերն ըստ ամիսների, մարդ



Աղբյուր՝ ՄԱՀԶԿ

15. 2020 թվականի միջազգային զբոսաշրջային հոսքերի մոտ 56%-ը բաժին է ընկել Եվրոպական երկրներին՝ կազմելով 221 մլն մարդ՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 70%-ով (կամ 525 մլն զբոսաշրջիկով), իսկ Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում 2020 թվականին միջազգային ժամանումների թիվը կրճատվել է 84%-ով (կամ 303 մլն զբոսաշրջիկով): Մերձավոր Արևելքում և Աֆրիկայում գրանցվել է ժամանողների 75%–ով նվազում, իսկ Ամերիկայում՝ 69.0%–ով:

Գրաֆիկ 1.9
Միջազգային զբոսաշրջային հոսքերն ըստ տարածաշրջանների, մարդ



Աղբյուր՝ ՄԱՀԶԿ [1]

16. 2021 թվականի զբոսաշրջային հոսքերի կանխատումների վերաբերյալ փորձագիտական հանրույթում փոխհամաձայնությունը բացակայում է: Մասնավորապես, ՄԱՀԶԿ–ի փորձագետների 45%–ը 2021 թվականի հետ կապված լավատեսական կանխատեսումներ ունի, մինչդեռ փորձագետների 25%–ը ակնկալում է 2020 թվականի ցուցանիշներին համանման ցուցանիշներ, իսկ 30%–ը կանխատեսում է զբոսաշրջության ցուցանիշների վատթարացում: Ընդհանուր առմամբ կանխատեսվում է, որ համաշխարհային զբոսաշրջության 2019 թվականի ծավալների վերականգնում չի կարելի սպասել մինչ 2023 թվականը:

17. Զբոսաշրջության ոլորտի ճգնաժամն իր ազդեցությունն է թողել նաև աշխատանքի շուկայի վրա: Համաձայն Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության (ՏՀԶԿ)՝ զբոսաշրջության ոլորտում ներգրավված աշխատողների մասնաբաժինն ընդհանուր զբաղվածության մեջ ըստ երկրների տատանվում է 2.0%-ից մինչև 16.0%: Ըստ ՄԱՀԶԿ–ի՝ յուրաքանչյուր տասներորդ աշխատատեղը որևէ կերպով առնչվում է զբոսաշրջության ոլորտի հետ, ինչն այդ ոլորտը դարձնում է միլիոնավոր մարդկանց եկամտի հիմնական աղբյուր: Գնահատվում է, որ համաճարակը վտանգի տակ է դրել համաշխարհային զբոսաշրջության ոլորտի 100-ից մինչև 120 մլն աշխատատեղ:[8]

1.4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՆԵՐ

18. Համաձայն ԱՄՀ–ի տվյալների՝ 2020 թվականին հումքային ապրանքների գները նախորդ տարվա նկատմամբ նվազել են 9.9%-ով: Գների անկումը սկսել է 2020 թվականի առաջին եռամսյակից՝ նվազագույնին հասնելով ապրիլին (նախորդ տարվա նույն ամսվա համեմատ անկումը կազմել է 31.9%): Ինքնամեկուսացման միջոցառումների մեղմման և մի շարք երկրներում տնտեսական ակտիվության վերականգնման ֆոնին 2020 թվականի դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ հումքային ապրանքների գներն աճել են 4.6%-ով:

19. Ընդհանուր առմամբ, 2020 թվականին ոչ վառելիքային հումքային ապրանքների գները նախորդ տարվա նկատմամբ աճել են 6.7%-ով, մինչդեռ վառելիքային հումքային ապրանքների գները նվազել են 29.9%-ով: Ըստ ԱՄՀ–ի կանխատեսումների՝ 2021 թվականին նախորդ տարվա համեմատ ոչ վառելիքային հումքային ապրանքների գները կաճեն 16.1%-ով:

[8] Տե՛ս, UNWTO, January 2021, COVID-19 AND TOURISM 2020: A year in review.

Գրաֆիկ 1.10
Հումքային ապրանքների գների փոփոխությունը, ամիսը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %



Աղբյուր՝ ԱՄՀ տվյալների բազա

20. 2020 թվականին նավթի գները նախորդ տարվա համեմատ նվազել են 32.7%-ով, ինչը հիմնականում համավարակի բռնկման արդյունքում ուղևորափոխադրումների կրճատման հետևանք էր: Ըստ ԱՄՀ կանխատեսումների նավթի գինը 2021 թվականին 2020 թվականի համեմատ կաճի 41.7%–ով՝ կազմելով 58.5 ԱՄՆ դոլար մեկ բարելի դիմաց:

Գրաֆիկ 1.11
Նավթի գինը*, ԱՄՆ դոլար մեկ բարելի դիմաց



Աղբյուր՝ ԱՄՀ տվյալների բազա
*UK Brent, Dubai Fateh, West Texas Intermediate crude oil նավթի տեսակների միջինացված գին

Ներդիր 2. Նավթի գների տատանումները

Նավթի գների անկմանը նպաստել է նաև «ՕՊԵԿ+» երկրների միջև անհամաձայնությունների առկայությունը: 2020 թվականի ապրիլին «ՕՊԵԿ+» երկրների միջև նավթի արդյունահանման ծավալների կրճատման վերաբերյալ հանամաձայնության հաստատումից հետո նավթի գները 21 ԱՄՆ դոլարից աճել են մինչև 40 ԱՄՆ դոլար մեկ բարելի դիմաց: Ներկայումս նավթի շուկան բնութագրվում է անորոշության բարձր մակարդակով՝ պայմանավորված Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական իրադարձությունների սրմամբ, նավթագազային հանքավայրերի զարգացմանը և շահագործմանն ուղղված ներդրումների կրճատմամբ, էներգետիկ ոլորտում շարունակվող սնանկություններով, «ՕՊԵԿ»-ի անդամ չհանդիսացող որոշ երկրներում նավթի արդյունահանման տեմպերի ավելացմամբ, Լիբիայում նավթի արդյունահանման տեմպերի արագացմամբ, ինչպես նաև «ՕՊԵԿ+» երկրների միջև ձեռք բերված համաձայնության հնարավոր խախտման ռիսկերով:

21. 2020 թվականի առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ոչ թանկարժեք մետաղների գների նվազումը կազմել է 4.2%, սակայն երրորդ եռամսյակից սկսած, հանքարդյունաբերական ոլորտի մատակարարման ընդհատումների հետևանքով, ինչպես նաև Չինաստանում արդյունաբերական գործունեության աշխուժացման արդյունքում մետաղների գները սկսել են վերականգնվել (2020 թվականի երրորդ եռամսյակի աճը 2019 թվականի երրորդ եռամսյակի նկատմամբ կազմել է 5.9%): Ընդհանուր առմամբ, 2020 թվականին ոչ թանկարժեք մետաղների գները նախորդ տարվա համեմատ աճել են 3.5%-ով: Մասնավորապես, պղնձի գներն աճել են 2.7%-ով՝ պայմանավորված Չինաստանի տնտեսության վերականգնմամբ, պահեստային ծավալների սպառմամբ և հիմնական արտադրող երկրներում (Չիլի և Պերու) մատակարարման ընդհատումներով: Ալյումինի գինը 2020 թվականին նախորդ տարվա նկատմամբ նվազել է 5.0%-ով՝ կազմելով 1,704.1 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց:

Գրաֆիկ 1.12
Թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղների գները



Աղբյուր՝ ԱՄՀ տվյալների բազա

22. Համաձայն ԱՄՀ–ի տվյալների՝ թանկարժեք մետաղների գները 2020 թվականին նախորդ տարվա համեմատ աճել են 27.0%-ով, ինչը հիմնականում բացատրվում է ոսկու նկատմամբ պահանջարկի աճով:[9] Ոսկու գինը 2020 թվականին մեկ ունցիայի դիմաց կազմել է 1,769.5 ԱՄՆ դոլար՝ աճելով նախորդ տարվա համեմատ 27.1%–ով:

23. Սննդամթերքի և խմիչքների գների ինդեքսը 2020 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճել է 1.8%-ով: Համաճարակի տարածման սկզբնական փուլերում որոշ պարենային ապրանքների գները (մասնավորապես՝ բրինձ) աճել են սպառողների մեծածավալ գնումների պատճառով, սակայն, բավարար առաջարկի ապահովման և պահանջարկի նվազմանը զուգընթաց, գները նվազել են:

Գրաֆիկ 1.13
Ցորենի և բրնձի գները,
ԱՄՆ դոլար մեկ տոնայի դիմաց



Աղբյուր՝ ԱՄՀ տվյալների բազա

1.5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ

24. Համաձայն Աշխատանքի Միջազգային Կազմակերպության (ԱՄԿ) գնահատումների՝ 2020 թվականին 2019 թվականի համեմատ աշխարհում աշխատատեղերը կրճատվել են 114 միլիոնով: Աշխատատեղերի հիմնական կրճատումն արձանագրվել է Հյուսիսային Ամերիկայում և Հարավային Ամերիկայում, իսկ Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում կրճատման ծավալներն ավելի ցածր են եղել:

25. Զբաղվածության մակարդակի անկման հետևանքով գործազուրկների թիվը 2020 թվականին աճել է 33 միլիոնով: Արդյունքում՝ գործազրկության մակարդակը կազմել է 6.5%՝ ավելանալով 1.1 տոկոսային կետով:

[9] Ոսկու նկատմամբ պահանջարկի աճը բացատրվում է կորոնավիրուսի հետևանքով ապագայի նկատմամբ անորոշություններով:

26. Կորոնավիրուսն իր բացասական ազդեցությունն է թողել նաև ընդհանուր աշխատաժամի ցուցանիշի վրա: Աշխատանքի Միջազգային Կազմակերպության տվյալների համաձայն՝ 2019 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ աշխատողների շաբաթական աշխատած ժամերը 2020 թվականին նվազել են 8.8%-ով, ինչը համարժեք է 255 միլիոն լրիվ դրույքով աշխատատեղերի:[10] Աշխատաժամերի անկումը հատկապես զգալի է եղել Լատինական Ամերիկայի երկրներում, Հարավային Եվրոպայում և Հարավային Ասիայում, մինչդեռ Արևելյան Ասիայում և Աֆրիկայում աշխատաժամերի անկում համեմատաբար քիչ է արձանագրվել:

27. ԱՄԿ–ի գնահատումներով՝ 2020 թվականին աշխատաժամերի կրճատումը 2019 թվականի նկատմամբ հանգեցրել է աշխատողների համախառն եկամուտների 8.3%–ով նվազման կամ 3.7 տրիլիոն ԱՄՆ դոլարով կորստի, ինչը համարժեք է 2019 թվականի համաշխարհային ՀՆԱ–ի գրեթե 4.4%–ին: Ամենամեծ եկամտային կորուստը կազմել է 10.3%, ինչն արձանագրվել է Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, իսկ Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում կորուստները համեմատաբար ավելի քիչ են (անկումը՝ 6.6%):

Գրաֆիկ 1.14
2020թ. աշխատողների համախառն եկամուտների նվազումն ըստ երկրների խմբերի,
նախորդ տարվա համեմատ



Աղբյուր՝ ԱՄԿ [1]

28. 2021 թվականի աշխատած ժամերի կանխատեսումները շատ անորոշ են՝ պայմանավորված համաճարակի ընթացքի հետագա հնարավոր զարգացումներով և երկրների կողմից կիրառվող համապատասխան միջոցառումների արդյունավետությամբ: Համաձայն ԱՄԿ կանխատեսումների՝ 2019 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ 2021 թվականին գլոբալ շաբաթական աշխատաժամանակը կնվազի 3.0%-ով, ինչը գրեթե

[10] Տե՛ս, ILO, January 2021, ILO Monitor: COVID-19 and the world of work. Seventh edition:

համարժեք է 90 միլիոն լրիվ դրույքով աշխատատեղերի:[11] Մասնավորապես, Հյուսիսային Ամերիկայում և Հարավային Ամերիկայում, Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում կանխատեսվում է շուրջ 6% աշխատաժամանակի կորուստ, իսկ Աֆրիկայում և Արաբական երկրներում՝ շուրջ 3%:

Գրաֆիկ 1.15
Աշխատաժամերի շաբաթական կորուստների կանխատեսումն ըստ երկրների խմբերի 2021թ. 2019թ.-ի IV եռամսյակի համեմատ



Աղբյուր՝ ԱՄԿ [1]

1.6. ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

29. Կորոնավիրուսի հետևանքով բազում մարդիկ կորցրել են աշխատանքը, հետևապես նաև աշխատանքային եկամուտները: Հաշվի առնելով այն փաստը, որ աշխատանքային եկամուտներն ըստ աշխատողների եկամտային խմբերի տարբեր չափով են կրճատվել, եկամուտների կորուստների խնդիրը հնարավոր է զուգորդվել է աճող անհավասարության և աղքատության խնդրի հետ:

30. Կանխատեսվում է, որ համաշխարհային աղքատության մակարդակը 2020 թվականին 1998 թվականից ի վեր առաջին անգամ աճել է: Համաձայն Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագրի (ՄԱԿԶԾ) գնահատականների՝ COVID-19-ի հետևանքով առաջացած տնտեսական ցնցումների պատճառով 2020 թվականին ևս 40-60 միլիոն մարդ հայտնվել է ծայրահեղ աղքատության մեջ:[12]

31. Ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ նախորդ երկու տասնամյակների ընթացքում ամբողջ աշխարհում ծայրահեղ աղքատության մեջ ապրող մարդկանց թիվը

[11] Տե՛ս, ILO, January 2021, ILO Monitor: COVID-19 and the world of work. Seventh edition:
[12] Տե՛ս, UN, 2020, Brief#2: putting the un framework for socio-economic response to covid-19 into action: insights:

կրճատվել է ավելի քան 1 միլիարդով: Կորոնավիրուսի համավարակը հանգեցրել է այս արդյունքների մի մասի կորսման: Ըստ գնահատականների՝ 2020 թվականից ծայրահեղ աղքատների թվաքանակը 2019 թվականի համեմատ աճել է 13.6%–ից 14.4%–ով:[13]

Գրաֆիկ 1.16
Աշխարհում ծայրահեղ աղքատ մարդկանց թվաքանակը, մլն մարդ



Աղբյուր՝ ՀԲ [2]

32. Ըստ գնահատականների, միայն կորոնավիրուսի ազդեցությամբ 2020 թվականին ծայրահեղ աղքատության շեմից ցածր հայտնվել է ևս 88–93 միլիոն մարդ: Այսպիսով, 2020 թվականի վերջի դրությամբ ծայրահեղ աղքատների թվաքանակի գնահատականը կազմել է 732.9–ից 737.6 միլիոն մարդ, ինչը համաշխարհային բնակչության մոտ 9.4%–ն է:[14] Կանխատեսվում է, որ 2021 թվականին COVID-19-ի պատճառով 143-ից մինչև 163 միլիոն մարդ կհայտնվի ծայրահեղ աղքատության շեմից ներքև՝ ծայրահեղ աղքատների թիվը հասցնելով 730.9-751.5 միլիոնի:

[13] Տե՛ս, WB, 2021, Updated estimates of the impact of COVID-19 on global poverty: Looking back at 2020 and the outlook for 2021:
[14] Տե՛ս, WB, 2021, Updated estimates of the impact of COVID-19 on global poverty: Looking back at 2020 and the outlook for 2021:

Գրաֆիկ 1.17
Ծայրահեղ աղքատների թվաքանակի տարեկան աճը, մլն մարդ



Աղբյուր՝ ՀԲ [2]

33. Համաճարակի հետևանքներից առավել շատ տուժել է Հարավային Ասիան, որտեղ ծայրահեղ աղքատության մեջ գտնվող մարդկանց քանակն, ըստ Համաշխարհային բանկի գնահատականների, 2020 թվականին ավելացել է 72-74 միլիոնով՝ կազմելով 164.3–166.4 մլն: Հաջորդ առավել տուժած տարածաշրջանը Սահարայից հարավ ընկած Աֆրիկան է, որտեղ ծայրահեղ աղքատության մեջ գտնվող մարդկանց քանակն, ըստ գնահատումների, 2020 թվականին կազմել է 472.9-474.8 միլիոն մարդ՝ նախորդ տարվա նկատմամբ ավելանալով 32-34 միլիոնով:

Գրաֆիկ 1.18
2020 թ. ավելացած աղքատների թվաքանակն ըստ տարածաշրջանների, մլն մարդ



Աղբյուր՝ ՀԲ [2]

1.7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

34. Կորոնավիրուսը հանգեցրեց պատմության մեջ կրթական համակարգի բնականոն ընթացքի խոշորագույն դադարին: Կրթական հաստատությունների առաջին փակումը գրանցվել է 2020 թվականի փետրվարին Չինաստանում և Մոնղոլիայում, ինչից հետո, համաճարակի լայն տարածմամբ և ինքնամեկուսացման անհրաժեշտությամբ պայմանավորված, աշխարհի շատ երկրներ փակել են գրեթե բոլոր կրթական հաստատությունները:

35. Համաձայն Միավորված Ազգերի Կրթական, Գիտական և Մշակութային Կազմակերպության (ՄԱԿԳՄԿ) տվյալների՝ 2020 թվականին աշխարհում բաց թողնված ուսումնական օրերի միջին թիվը կազմել է 49 օր, ընդ որում՝ այդ ցուցանիշը ըստ երկրների զգալիորեն տարբերվում է:

Գրաֆիկ 1.19
2020 թ. կորոնավիրուսի պատճառով բաց թողնված ուսումնական օրերը



Աղբյուր՝ ՅՈՒՆԵՍԿՈ-ՅՈՒՆԻՍԵՖ-ՀԲ; ԱՄՀ հաշվարկներ

36. 2020 թվականին համաճարակի խորացմանը զուգընթաց շատ երկրներ անցում են կատարել հեռավար ուսուցման տարբերակին, սակայն այն ևս նոր խնդիրներ է առաջ բերել՝ ուսուցիչների և աշակերտների շրջանում տեխնիկական հնարավորությունների և համապատասխան գիտելիքների բացակայության պատճառով:[15]

37. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից իրականացված հետազոտությունների համաձայն՝ ԱՄՆ-ում մեկ ուսումնական տարին

[15] Համաձայն ՏՀԶԿ-ի հարցման արդյունքների՝ ուսուցիչների և դասախոսների շուրջ 20.0%-ը տեղեկատվական տեխնոլոգիաների հմտությունների և կարողությունների զարգացման անհրաժեշտություն ունի:

բերում է միջինում 11.1% եկամտի աճ, իսկ այլ երկրներում՝ 7.5%:[16] Հաշվի առնելով համաճարակի պատճառով 2020 թվականին ուսումնական տարվա կորուստները՝ ենթադրվում է, որ «տուժած» աշակերտների աշխատանքային եկամուտները ամբողջ կյանքի ընթացքում կնվազեն 2.5-ից 4.0%-ով: Բացի դրանից, ուսուցման յուրաքանչյուր լրացուցիչ տարի սերտորեն կապված է ավելի բարձր զբաղվածության և ավելի ցածր գործազրկության մակարդակների հետ: Վերոնշյալից ակնհայտ է դառնում, որ կրթական կորուստները հետագայում կհանգեցնեն նաև ՀՆԱ-ի նվազման: Ըստ ՏՀԶԿ հետազոտությունների՝ 2020 թվականի ուսումնական տարվա մեկ երրորդի կորուստը մինչև դարի վերջ կնվազեցնի ՏՀԶԿ երկրի ՀՆԱ-ն միջինում 1.5%-ով: [17]

38. Կրթական հաստատությունների փակումը ազդեցություն կթողնի նաև մարդկային ներուժի զարգացման ինդեքսի ցուցանիշի վրա: Համաձայն Միացյալ Ազգերի Կազմակերպության տվյալների՝ վերոնշյալ ինդեքսը, որի մեկ երրորդը բաժին է ընկնում կրթության ոլորտին, 2020 թվկանին 1991 թվականից ի վեր առաջին անգամ նվազել է:

Գրաֆիկ 1.20
Մարդկային ներուժի զարգացման ինդեքսի տարեկան փոփոխությունը, աշխարհ



Աղբյուր՝ ՄԱԶԾ [1]

[16] Տե՛ս, Hanushek, Eric A., Guido Schwerdt, Simon Wiederhold, Ludger Woessmann, 2015, "Returns to Skills around the World: Evidence from PIAAC", European Economic Review:

[17] Տե՛ս, Woessmann, Ludger, 2016, "The Economic Case for Education", Education Economics:

2. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

2.1 ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ

1. Հայաստանում կորոնավիրուսի հետևանքով սահմանված ինքնամեկուսացումը, տնտեսական գործունեության որոշ տեսակների սահմանափակումներն, ինչպես նաև Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով առաջացած շոկերն իրենց բացասական ազդեցությունն են թողել տնտեսության գրեթե բոլոր ոլորտների վրա:

2. Մինչև համաճարակի բռնկումը Հայաստանի տնտեսական զարգացման ընդհանուր միտումը գնահատվում էր որպես դրական՝ հաշվի առնելով բարձր տնտեսական աճի տեմպերը, արտահանման ծավալի կայուն աճը և գործազրկության ցուցանիշի նվազումը:[18] Համավարակի լայն տարածման և տնտեսական գործունեության տեսակների ու մարդկանց տեղաշարժի սահմանափակումների սահմանմանը զուգընթաց տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի ցուցանիշների գծով անկում է գրանցվել: Այս ամենին հաջորդած պատերազմի հետևանքները ևս բացասաբար են անդրադարձել տնտեսության վրա: Արդյունքում՝ Հայաստանի ՀՆԱ-ն 2020 թվականին 2019 թվականի համեմատ նվազել է 7.4%-ով:

3. Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության գնահատականների՝ համաճարակի և պատերազմի ագրեգացված բացասական ազդեցությունը Հայաստանի 2020 թվականի ՀՆԱ-ի մակարդակի վրա կազմել է 14.0%-15.0% (կամ շուրջ 916.1 մլրդ դրամ 2019 թվականի գներով):

Մեթոդաբանական պարզաբանում

2020 թվականի ՀՆԱ-ի մակարդակի վրա պատերազմի և համաճարակի ազդեցության գնահատման համար կիրառվել է ժամանակային շարքերի վերլուծություն, որպես ընտրանքային օգտագործելով 2003-2019 թթ. տարեկան և եռամսյակային ՀՆԱ-ի ցուցանիշները: Ստացված գնահատականը համեմատվել է 2020 թվականի փաստացի ՀՆԱ-ի ցուցանիշի հետ:

Վերլուծության համաձայն՝ պատերազմի և համաճարակի ազդեցությունը կազմում է 14.0%:



[18] Տե՛ս, UNDP, 2020, The Covid-19 Socio-Economic Impact Assessment Report:

4. 2020 թվականին 2019 թվականի համեմատ անկում է գրանցվել ՀՆԱ ձևավորող բոլոր հիմնական ոլորտների գծով. առևտրի ոլորտի ավելացված արժեքի անկումը կազմել է 11.7%, ծառայություններինը՝ 9.1%, շինարարությանը՝ 6.7%, արդյունաբերությանը՝ 1.7%, իսկ գյուղատնտեսությանը՝ 4.0%: ՀՆԱ 7.4% անկմանը առավելագույն բացասական նպաստում են ունեցել ծառայությունների և առևտրի ոլորտները՝ համապատասխանաբար -3.7 և -1.4 տոկոսային կետ: Մյուս ոլորտների և զուտ հարկերի գումարային բացասական նպաստումը կազմել է -2.3 տոկոսային կետ:

5. Ըստ եռամսյակների ՀՆԱ ցուցանիշներն առավել ցայտուն են ցույց տալիս համաճարակի տարածմանը զուգընթաց բացասական ազդեցության խորացումը: ՀՆԱ-ի անկումը գրանցվել է 2020 թվականի երկրորդ եռամսյակից՝ 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կազմելով 13.5%: 2020 թվականի երրորդ եռամսյակում, տնտեսական գործունեության սահմանափակումների թուլացման, ինչպես նաև պետության կողմից իրականացված հակաճգնաժամային միջոցառումների արդյունքում արձանագրվել է անկման դանդաղում (8.7%): Նույն չափի անկում է գրանցվել նաև չորրորդ եռամսյակում՝ պայմանավորված պատերազմի շոկի լրացուցիչ ազդեցությամբ:

Գրաֆիկ 2.1
Տնտեսության ճյուղերի նպաստումը ՀՆԱ աճին, տոկոսային կետ



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա

6. Տարեկան տնտեսական աճին բացասական նպաստում է ունեցել նաև մասնավոր ծախսումների կրճատումը՝ պայմանավորված համավարակի պայմաններում սպառման պահանջարկի նվազմամբ: Համաճարակի և պատերազմի հետևանքով բնակչության մոտ ձևավորված սպասումները հանգեցրել են 2020 թվականին 2019 թվականի համեմատ

տնային տնտեսությունների ծախսերի 13.8%–ով կրճատման: Վերոնշյալը պայմանավորված է ոչ միայն կորոնավիրուսի հետևանքով աշխատանքային եկամուտների կրճատման և կորստի հետ, այլ նաև՝ գործընկեր երկրներում տնտեսական անկման և միգրացիոն սահմանափակումների հետևանքով արտերկրից ֆիզիկական անձանց դրամական զուտ փոխանցումների կրճատմամբ: Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի տվյալների՝ 2020 թվականին ֆիզիկական անձանց անունով դրամային փոխանցումների ներհոսքը կազմել է 1,841.7 մլն ԱՄՆ դոլար՝ 2019 թվականի համեմատ նվազելով 6.0%–ով:

Գրաֆիկ 2.2
Տնային տնտեսությունների սպառման ծախսերի աճը, եռամսյակը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ, %



Գրաֆիկ 2.3
Համախառն կուտակման աճը, եռամսյակը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ, %



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա

7. Տնտեսության ճյուղերում գրանցված բացասական տեղաշարժերը, ապագայի հետ կապված անորոշությունը, ինչպես նաև առկա ռիսկերը 2020 թվականին 2019 թվականի համեմատ հանգեցրել են համախառն կուտակման 9.6%–ով անկման:

8. Համաշխարհային մակարդակում տնտեսական գործունեության սահմանափակումների հետևանքով ներքին և արտաքին պահանջարկի նվազումը հանգեցրել է 2020 թվականին նախորդ տարվա համեմատ ապրանքների ու ծառայությունների արտահանման ու ներմուծման համապատասխանաբար 34.2%-ով և 33.2%–ով նվազմանը: Վերոնշյալ ցուցանիշների անկմանը նպաստել են նաև համաճարակի կանխարգելման համար ընդունված տրանսպորտային ենթակառուցվածների (և ընդհանրապես՝ լոգիստիկ համակարգի) գծով սահմանափակումները:

9. Ծառայությունների արտահանումը 2020 թվականին 2019 թվականի համեմատ նվազել է 54.4%-ով: Անկումն առավել զգալի է ծառայությունների արտահանման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող «ճանապարհորդություն» հոդվածի գծով (անկումը 2020

թվականին 2019 թվականի համեմատ կազմել է 81.0%): Մարդկային անմիջական շփում չպահանջող ծառայության տեսակների գծով 2020 թվականին աճ է գրանցվել (տեղեկատվական ծառայություններ ոլորտի արտահանման աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 25.5%):

10. Ակնկալվում է, որ Հայաստանում 2021 թվականին կգրանցվեն տնտեսական աճի կայուն ցուցանիշներ: Ներկա ճգնաժամերից բացի, տնտեսական հեռանկարներն ընդհանուր առմամբ դրական են, ինչը կապված է սպասվող գլոբալ վերականգնման և ներքին բարեփոխումների իրականացման հետ:[19]

11. Համաձայն տարբեր աղբյուրների՝ Հայաստանի 2021 թվականի Համախառն ներքին արդյունքի աճի գնահատումները հետևյալ են.

- Համաձայն ԿԲ կանխատեսումների՝ 2021 թվականին 2020 թվականի համեմատ ՀՆԱ իրական աճը կկազմի շուրջ 4.0%:
- Համաձայն ԱՄՀ կանխատեսումների՝ աճը կկազմի 1.0%:
- Համաձայն ՀԲ–ի կանխատեսումների՝ աճը կկազմի 3.4%:
- Համաձայն Ասիական Զարգացման Բանկի կանխատեսումների՝ աճը կկազմի շուրջ 1.8%:
- ՀՀ Կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի N1212 որոշման համաձայն՝ 2021 թվականին կանխատեսվում է ՀՆԱ 7.0% աճ:

2.2 ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

12. Հաշվի առնելով համավարակի յուրահատկությունը՝ այն տարբերակված, ոչ հավասար ազդեցություն է ունեցել տնտեսության տարբեր ճյուղերի վրա: Կորոնավիրուսի ազդեցությունն առավել բացասաբար է անդրադարձել մարդկային անմիջական շփում պահանջող ծառայությունների, քան ապրանքային պահանջարկի վրա:

◊ *ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

13. 2020 թվականին նախորդ տարվա համեմատ ծառայությունների ծավալի անկումը կազմել է 14.7%: Կորոնավիրուսի բացասական ազդեցությունն ակնհայտորեն երևան եկավ մարտ ամսին, սակայն անկումը շարունակվել է մինչև տարեվերջ՝ ապրիլից դեկտեմբեր ամիսներին տատանվելով՝ 17.0%-23.4%–ի սահմաններում: Համավարակի տարածման սկզբնական շրջանում անկում է գրանցվել հիմնականում զբոսաշրջության և սպասարկման ոլորտներում, ինչից հետո կորոնավիրուսի բացասական ազդեցությունը տարածվել է նաև տնտեսության այլ ճյուղերի վրա:

[19] S'ես, IMF, December 2020, IMF Country Report No. 20/318:

Գրաֆիկ 2.4
Ծառայությունների ծավալը (մլրդ դրամ) և աճը (%), ամիսը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա

14. Համավարակից առավել տուժել են կեցության և սննդի կազմակերպման (2020 թվականին անկումը նախորդ տարվա համեմատ կազմել է 45.0%), հանգստի կազմակերպման (2020 թվականին անկումը նախորդ տարվա համեմատ կազմել է 19.5%) և մի քանի այլ ծառայության տեսակներ (տրանսպորտ ծառայության տեսակի անկումը 2020 թվականին նախորդ տարվա համեմատ կազմել է 35.2%):

15. Ինչպես աշխարհում, այնպես էլ՝ Հայաստանում, համավարակի ազդեցությունը զգալի է նաև կրթական համակարգի վրա: UNESCO–ի տվյալների համաձայն՝ 2020 թվականի ընթացքում Հայաստանում դպրոցների մասնակի կամ ամբողջական փակման միջին տևողությունը կազմել է 12 շաբաթ, որից ամբողջական փակմանը՝ 9 շաբաթ:

16. 2020 թվականին 2019 թվականի համեմատ կրթություն ծառայության տեսակի ծավալը նվազել է 9.1%-ով, ինչը պայմանավորված է ուսումնական հաստատությունների փակմամբ կամ առկա ուսուցման գործընթացի հեռավար ուսուցմամբ մասամբ փոխարինմամբ: Միայն 2020 թվականի սեպտեմբերից գրանցվել է կրթություն ծառայության տեսակի ծավալի աճ, ինչը պայմանավորված է ուսումնական հաստատությունների վերաբացմամբ՝ առողջապահական որոշակի կանոնների պահպանման պահանջով:

17. Համավարակի ազդեցությունը զգալի չէ ծառայությունների այնպիսի տեսակների գծով, որոնք առավելապես հենված են տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահար

հաղորդակցման միջոցների վրա: Դրանցից են տեղեկատվություն և կապ ու ֆինանսական գործունեություն և ապահովագրություն ծառայության տեսակները:[20]

◊ *ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ*

18. Համաճարակի ազդեցությունը զգալի է նաև արդյունաբերության, մասնավորապես՝ մշակող արդյունաբերության և վերջինիս ենթաճյուղերի կտրվածքով՝ պայմանավորված տնտեսությունում ներքին և արտաքին պահանջարկի կրճատման հետ: Մշակող արդյունաբերության ծավալը 2020 թվականին կազմել է 1,387.9 մլրդ դրամ՝ նվազելով նախորդ տարվա համեմատ 3.9%–ով:

19. Վերոնշյալ նվազումը հիմնականում տեղի է ունեցել խմիչքների 12.9%–ով և ծխախոտային արտադրատեսակների արտադրության 19.7%–ով նվազման պատճառով: Թե՛ խմիչքների արտադրության և թե՛ ծխախոտե արտադրատեսակների արտադրության անկումն առավելապես պայմանավորված է արտաքին շուկայի պահանջարկի նվազմամբ, ինչը հանգեցրել է նաև իրացման ծավալների նվազման (խմիչքների իրացման միջին ամսական 11.2% անկմանը արտաքին շուկայի բացասական նպաստումը կազմել է -8.7 տոկոսային կետ, իսկ ծխախոտե արտադրատեսակների 21.7% անկմանը՝ -13.6 տոկոսային կետ):

20. Դեղագործական արտադրատեսակների արտադրության ծավալը 2020 թվականին 2019 թվականի համեմատության աճել է 23.6%–ով՝ կապված կորոնավիրուսի և պատերազմի հետևանքով դեղագործական արտադրանքի պահանջարկի աճի հետ: Դեղագործական արտադրանքի իրացման միջին ամսական աճը 2020 թվականին կազմել է 22.8%, որին ներքին շուկայի պահանջարկի նպաստումը 7.3, իսկ արտաքին շուկայինը՝ 15.5 տոկոսային կետ է:

21. 2020 թվականին 2019 թվականի համեմատ անկում է գրանցվել նաև շինարարության (9.5%) ու մեծածախ (9.0%) և մանրածախ (17.3%) առևտրի ոլորտներում: Գյուղատնտեսության վրա համաճարակի ազդեցությունը էական չէ:

2.3 ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

22. Հաշվի առնելով համաճարակի տարածման կանխարգելման համար գրեթե բոլոր ցամաքային և օդային փոխադրումների գծով ամբողջ աշխարհում սահմանված սահմանափակումները, Հայաստանում ծառայությունների առավել տուժած ճյուղերից է զբոսաշրջությունը: 2020 թվականին Հայաստան ժամանած ուղևորների քանակը կազմել է 375 հազ մարդ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 80.2%-ով կամ 1,519 հազ մարդով:

[20] 2020 թվականին 2019 թվականի համեմատ «տեղեկատվություն և կապ» և «ֆինանսական գործունեություն և ապահովագրություն» ծառայության տեսակների ծավալների աճը կազմեց համապատասխանաբար 6.1% և 6.2%:

23. 2020 թվականի առաջին եռամսյակից իսկ դիտարկվել է զբոսաշրջիկների թվի անկում, ինչն իր նվազագույնին է հասել երկրորդ եռամսյակին՝ 2019 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 99.8%-ով: Սահմանափակումների թուլացմանը զուգընթաց 2020 թվականի չորրորդ եռամսյակից արձանագրվել են զբոսաշրջային հոսքերի վերականգնման միտումներ, սակայն նախորդ տարվա նկատմամբ դրանք դեռ պահպանվել են զգալիորեն ցածր մակարդակում:

Գրաֆիկ 2.5
Զբոսաշրջիկների թվաքանակը և աճը,
եռամսյակը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա

24. Այլ երկրների կողմից, ինչպես նաև Հայաստանում զբոսաշրջային այցելությունների սահմանափակումներն առաջին հերթին հանգեցրել են զբոսաշրջային գործունեությամբ զբաղվող և դրան հարակից ճյուղերի կազմակերպություններում աշխատատողների կտրուկ նվազման: Ընդհանուր առմամբ, վերոնշյալ ճյուղերում[21] զբաղված աշխատողների թվաքանակը 2020 թվականի ապրիլին 2019 թվականի ապրիլի համեմատ նվազել է 56%-ով կամ 17.4 հազար մարդով:

25.Համաձայն ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի տվյալների՝ վերջին տասնամյակում մեկ զբոսաշրջիկի հաշվով տարեկան եկամուտը կազմում է մոտ 800 ԱՄՆ դոլար: Կորոնավիրուսի բացասական ազդեցության հետևանքով 2020 թվականին զբոսաշրջային հոսքերից ստացված ընդհանուր եկամուտը 2019 թվականի համեմատ նվազել է 80.0%-ով (1.2 մլրդ ԱՄՆ դոլարով)՝ կազմելով 305 մլն ԱՄՆ դոլար:

[21] Կացության կազմակերպում, հանրային սննդի կազմակերպում, վարձույթ և լիզինգ, զբոսաշրջային գործակալություններ, սպորտի, զվարճությունների և հանգստի կազմակերպում:

2.4 ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

26. 2020 թվականին ապրանքների ու ծառայությունների ՀՀ արտահանման ու ներմուծման ծավալները նախորդ տարվա համեմատ նվազել են համապատասխանաբար 34.2%-ով և 33.2%–ով: Անկումը հիմնականում պայմանավորված է համաճարակի բռնկման արդյունքում համաշխարհային արտադրական շղթաներում դիտարկված տեղաշարժերով, ինչպես նաև աշխարհի գրեթե բոլոր երկրներում տնտեսական անկմամբ:

27. Արտաքին տնտեսական գործունեության տեսանկյունից Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում, ինչպես և ամբողջ աշխարհում, տնտեսական զարգացումները եղել են ոչ բարենպաստ: Հայաստանի հիմնական գործընկեր երկրներից Ռուսաստանում 2020 թվականին ՀՆԱ անկումը 2019 թվականի համեմատ կազմել է 3.1%, Գերմանիայում՝ 4.9%, Իտալիայում՝ 8.9%, իսկ Չինաստանում և Իրանում՝ 2020 թվականին գրանցվել է ՀՆԱ-ի համապատասխանաբար 2.3% և 1.5% աճ, ինչը էականորեն ցածր է 2019 թվականի ցուցանիշներից: Եվրոպական երկրներում անկումը միջինում կազմել է 6.6%, ԱՊՀ-ում միջինը՝ 3.0%:

28. Վերոնշյալով պայմանավորված 2020 թվականի առաջին եռամսյակից սկսած ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալը նվազել է՝ իր նվազագույնին հասնելով երրորդ եռամսյակում (անկումը 2019 թվականի երրորդ եռամսյակի նկատմամբ կազմել է 41.1%): Տարեկան կտրվածքով ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալը կազմել է 3.8 մլրդ ԱՄՆ դոլար՝ նվազելով 2019 թվականի համեմատ 32.3%:[22]

Գրաֆիկ 2.6
Ապրանքների և ծառայությունների արտահանման աճը, եռամսյակը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ, %



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա

[22] Տե՛ս, ՀՀ ՎԿ «Վճարային հաշվեկշիռ, 6»:

29. Ապրանքների արտահանումը 2020 թվականին կազմել է 2544.4 մլն ԱՄՆ դոլար՝ 2019 թվականի համեմատ նվազելով 3.9%-ով: Արտահանման նվազմանը հիմնականում նպաստել են հետևյալ ապրանքատեսակների գծով արտահանման ծավալների անկումը.

- Պղինձի հանքաքար, խտանյութ ապրանքատեսակի արտահանման ծավալները 2020 թվականին 2019 թվականի համեմատ նվազել են 1.3%-ով կամ 9 մլն ԱՄՆ դոլար՝ կազմելով 618 մլն ԱՄՆ դոլար: Ի հեճուկս 2020 թվականին 2019 թվականի համեմատ պղնձի միջազգային գնի ցուցանիշի 2.7%-ով աճին, վերոնշյալ ապրանքատեսակի արտահանման բնեղեն ծավալները նվազել են:
- Ծխախոտի արտահանման ծավալները 2020 թվականին 2019 թվականի համեմատ նվազել են 12.3%-ով կամ 33 մլն ԱՄՆ՝ կազմելով 239.4 մլն ԱՄՆ դոլար:
- Կոնյակի արտահանման ծավալները 2020 թվականին 2019 թվականի համեմատ նվազել են 20.3%-ով կամ 51 մլն ԱՄՆ՝ կազմելով 201.8 մլն ԱՄՆ դոլար:
- Ոսկերչական իրերի արտահանման ծավալները 2020 թվականին 2019 թվականի համեմատ նվազել են 32.6%-ով կամ 14 մլն ԱՄՆ՝ կազմելով 28.7 մլն ԱՄՆ դոլար:

Գրաֆիկ 2.7
Արտահանման ծավալներն ըստ ապրանքատեսակների, մլն ԱՄՆ դոլար



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա

30. Ըստ խոշոր գործընկեր երկրների արտահանման ծավալների պատկերը հետևյալն է.

- ԵՄ արտահանման ծավալները 2020 թվականին կազմել են 428.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 25.9%-ով: Նվազումը տեղի է ունեցել հանքահումքային արտադրանք և ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր ապրանքատեսակների գծով:

- ԵԱՏՄ երկրներ արտահանման ծավալները 2020 թվականին նախորդ տարվա նկատմամբ նվազել են 8.3%-ով՝ կազմելով 705.3 մլն ԱՄՆ դոլար: Ռուսաստանի Դաշնություն արտահանման ծավալները 2020 թվականին կազմել են 675.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 9.0%-ով: Վերոնշյալ երկրների խումբ և Ռուսաստան արտահանման նվազումը տեղի է ունեցել թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր, պատրաստի սննդի արտադրանք, սարքեր և ապարատներ, հագուստ ապրանքատեսակների գծով:
- Այլ երկրներ արտահանման ծավալները 2020 թվականին կազմել են 1,375.7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 9.1%-ով: Աճը գրանցվել է կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանքի, բուսական ծագման արտադրանքի, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրերի գծով:

Գրաֆիկ 2.8
Արտահանման աճն ըստ հիմնական գործընկեր երկրների, 2020 թվականը 2019 թվականի համեմատ, %



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա

31. 2020 թվականին ապրանքների և ծառայությունների ներմուծման ծավալները կազմել են 5.0 մլրդ ԱՄՆ դոլար՝ նվազելով նախորդ տարվա համեմատ 33%–ով:[23] Անկումը պայմանավորված է ներքին սպառման, ինչպես նաև համախառն կուտակման նվազման արդյունքում ներդրումների կրճատմամբ:

[23] Տե՛ս, ՀՀ ՎԿ «Վճարային հաշվեկշիռ,6»:

Գրաֆիկ 2.9
Ապրանքների և ծառայությունների ներմուծման աճը, եռամսյակը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ, %



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա

32. Ապրանքների ներմուծման ծավալները 2020 թվականին 2019 թվականի համեմատ նվազել են 17.7%–ով՝ կազմելով 4,559.4 մլն ԱՄՆ դոլար: Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքների լայն տնտեսական (BEC) դասակարգման հետևյալն է.[24]

- 2020 թվականին կապիտալ ապրանքների ներմուծումը կազմել է 766.6 մլն ԱՄՆ դոլար՝ 2019 թվականի համեմատ նվազելով 20.2%-ով, պայմանավորված անորոշության պայմաններում ներդրումների նվազմամբ: Վերոնշյալ ցուցանիշի անկմանը հիմնականում նպաստել են բեռնատար, մարդատար, հատուկ նշանակության ավտոմեքենաներ և հեռախոսային ու հեռագրային ապարատներ ապրանքատեսակների գծով ներմուծման ծավալների նվազումը:
- Միջանկյալ ապրանքների ներմուծումը 2020 թվականին կազմել է 2,279.3 մլն ԱՄՆ դոլար՝ նվազելով նախորդ տարվա համեմատ 8.7%-ով կամ 218.2 մլն ԱՄՆ դոլարով: Նվազումը հիմնականում պայմանավորված է նավթ և նավթամթերք, ադամանդե քար և կիսամշակ ու անմշակ ոսկի ապրանքատեսակների ներմուծման ծավալների կրճատմամբ:
- Կորոնավիրուսի հետևանքով ներքին շուկայում սպառողական վարքագծի փոփոխության, ինչպես նաև բնակչության վճարունակ պահանջարկի նվազման հետևանքով 2020 թվականին վերջնական սպառման ապրանքների ներմուծումը կազմել է 1,513.6 մլն ԱՄՆ դոլար՝ 2019 թվականի համեմատ նվազելով 27.3%-ով:

[24] ՀՀ ՊԵԿ տվյալներ

2.5 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ

33. 2020 թվականին աշխատանքի շուկայում արձանագրվել են ինչպես համավարակի և դրա հետ կապված սահմանափակումների, այնպես էլ՝ Արցախյան պատերազմի բացասական ազդեցությունները: Զբաղվածների թվաքանակը 2020 թվականին կազմել է 991.0 հազար մարդ՝ նվազելով նախորդ տարվա նկատմամբ 1.9%-ով կամ 18.8 հազար մարդով: Զբաղվածության մակարդակը 2020 թվականին 2019 թվականի ցուցանիշի նկատմամբ նվազել է -1.0 տոկոսային կետով՝ կազմելով 48.3%: Գործազրկության մակարդակը 2020 թվականին 2019 թվականի համեմատ աճել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 18.1%:

34. Աշխատողների միջին թվաքանակը (ֆորմալ զբաղվածություն) 2020 թվականին 2019 թվականի ցուցանիշի նկատմամբ աճել է 4.3%-ով կամ 25.7 հազար մարդով՝ կազմելով 623.9 հազար մարդ:[25] Տնտեսության ճյուղերի կտրվածքով աճ գրանցվել է բոլոր ոլորտներում, բացառությամբ փոխադրումներ և պահեստային տնտեսություն, կացության և հանրային սննդի կազմակերպում ու մշակույթ, զվարճություններ և հանգիստ ենթաոլորտների:

Գրաֆիկ 2.10
Զբաղվածության և գործազրկության մակարդակները, %



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա

35. Աշխատաշուկայի վրա համավարակի բացասական ազդեցությունը նկատելի է դարձել արդեն իսկ 2020 թվականի ապրիլ ամսին: Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վիճակագրության՝ 2020 թվականի ապրիլին զրոյից մեծ հարկման բազա ունեցող

[25] Տե՛ս, ՀՀ ՎԿ:

աշխատատեղերի թվաքանակը կազմել է 547 հազար մարդ՝ նույն տարվա մարտ ամսվա համեմատ նվազելով 72.2 հազարով, իսկ նախորդ տարվա ապրիլի համեմատ՝ 47.4 հազարով:[26] ՀՀ կառավարության կողմից իրականացված պետական աջակցության միջոցառումների, ինչպես նաև տնտեսական սահանափակումների մեղմացման արդյունքում՝ մայիս ամսից սկսած գրանցվել է աշխատատեղերի աստիճանական վերականգնում: Սեպտեմբերի վերջին սկսած պատերազմը հանգեցրել է երկրորդ շոկին, ինչի արդյունքում արդեն իսկ հոկտեմբեր ամսին գրանցվել է աշխատատեղերի անկում, որը պահպանվել է մինչև տարեվերջ: 2021 թվականից սկսած գրանցվել է աշխատատեղերի թվաքանակի աճի միտում: 2021 թվականի ապրիլին աշխատատեղերի թվաքանակը կազմել է 626.4 հազար մարդ՝ 2019 թվականի ապրիլի համեմատ աճելով 33.8 հազարով: Վերոնշյալ պատկերը նույնն է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի կտրվածքով:

Գրաֆիկ 2.11
Ընդհանուր աշխատատեղերի թվաքանակի դինամիկան, հազար աշխատատեղ



Աղբյուր՝ ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտե

36. 2020 թվականի ապրիլին 2019 թվականի ապրիլի համեմատ կրճատված 47,413 աշխատատեղերի մեծ մասը (27,204 աշխատատեղ) կազմում են ծառայությունների ոլորտի աշխատատեղերը: Առևտրի ոլորտում կրճատվել է 9,249 աշխատատեղ, իսկ արդյունաբերության ոլորտում՝ 7,968:

[26] ՀՀ ՊԵԿ տվյալներում արտացոլված չեն հարկադիր պարապուրդի վերաբերյալ տվյալները, ինչի հետևանքով ՀՀ ՊԵԿ և ՎԿ ցուցանիշների միջև առկա է տարբերություն (համաձայն ՀՀ ՎԿ տվյալների՝ աշխատողների թվաքանակը 2020 թվականի ապրիլին կազմել է 585 հազար մարդ): Տարբերության պատճառը կայանում է նրանում, որ ՀՀ ՎԿ-ի հաշվարկներում ներառվել են նաև աշխատողներին ամբողջությամբ կամ նրանց մի մասին չվճարվող հարկադիր պարապուրդ ուղարկած կազմակերպությունների տվյալները: Այդ աշխատողների աշխատանքային գործունեությունը չի դադարեցվել, սակայն նրանք չեն վարձատրվել:

Աղյուսակ 1. Աշխատողների թվաքանակը և աճը, հազար մարդ

	Ընդամենը 2020թ. ապրիլին	*Աճ* 2020թ.ապրիլ/ 2020թ. մարտ	*Աճ* 2020թ. ապրիլ/ 2019թ. ապրիլ	**Ընդամենը 2021թ. ապրիլին**	*Աճ* 2021թ. ապրիլ/ 2019թ. ապրիլ
Ընդամենը, *որից*	**547.7**	-72.1	-44.8	**626.4**	33.8
Գյուղատնտեսություն	**4.8**	0.1	0.6	**4.9**	0.7
Արդյունաբերություն	**93.4**	-11.4	-7.9	**102.4**	1.0
Շինարարություն	**18.0**	-0.2	0.2	**20.9**	3.1
Առևտուր	**80.9**	-16.2	-9.2	**96.2**	6.0
Ծառայություններ	**148.4**	-34.1	-27.2	**181.1**	5.5

Աղբյուր՝ ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտե

37. Կորոնավիրուսի բացասական ազդեցությունն առավել խորն է ծառայությունների ոլորտի վրա: Վերոնշյալ ոլորտում 2020 թվականի ապրիլին նախորդ տարվա ապրիլի համեմատ աշխատատեղերի անկումը կազմել է 15.5%:

Գրաֆիկ 2.12
Ծառայությունների ոլորտի աշխատատեղերի թվաքանակը և աճը, ամիսը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ



Աղբյուր՝ ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտե

38. 2020 թվականի ապրիլին 2019 թվականի ապրիլի համեմատությամբ աշխատատեղերի թվաքանակը կրճատվել է ծառայության 49 տեսակներից 29-ում:[27] Աշխատատեղերի կրճատում գրանցվել է հիմնականում այնպիսի ծառայությունների տեսակների գծով, որոնք պահանջում են անմիջական մարդկային շփում կամ կապված են զբոսաշրջային այցելությունների հետ:

[27] Նեռարյալ ենթատեսակները

Աղյուսակ 2. Ծառայությունների ոլորտում աշխատողների թվաքանակը և աճը, հազար մարդ

	Ընդամենը 2020թ. ապրիլին	*Աճ* 2020թ. ապրիլ/ 2020թ. մարտ	*Աճ* 2020թ. ապրիլ/ 2019թ. ապրիլի	**Ընդամենը 2021թ. ապրիլին**	*Աճ* 2021թ.ապրիլ/ 2019թ. ապրիլ
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	**12.1**	-2.9	-4.4	**14.3**	-2.1
Կացության և հանրային սննդի կազմակերպում	**11.5**	-18.2	-14.9	**24.0**	-2.0
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	**5.2**	-1.1	-2.3	**5.3**	-2.1
Մասնագիտական, գիտական գործունեություն	**1.2**	-0.3	0.0	**1.5**	0.3
Կրթություն	**4.6**	-0.8	-1.1	**5.7**	0.0

Աղբյուր՝ ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտե

39. Արդյունաբերության ոլորտում 2020 թվականի ապրիլին նախորդ տարվա ապրիլի նկատմամբ աշխատատեղերի անկումը կազմել է 7.9% կամ 7,970 մարդ:

Գրաֆիկ 2.13
Արդյունաբերությունում աշխատատեղերի թվաքանակը և աճը, ամիսը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ



Աղբյուր՝ ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտե

40. Արդյունաբերության հիմնական ենթաճյուղերից 2020 թվականի ապրիլին 2019 թվականի ապրիլի համեմատությամբ աշխատատեղերի աճ գրանցվել է միայն հանքագործական արդյունաբերությունում՝ 1,423-ով: Մշակող արդյունաբերությունում աշխատատեղերը կրճատվել են 8,859-ով, իսկ էներգետիկայի և ջրամատակարարման ենթաճյուղում՝ 532-ով:

Աղյուսակ 3. Արդյունաբերության ոլորտում աշխատողների թվաքանակը և աճը, հազար մարդ

	Ընդամենը 2020թ. ապրիլին	*Աճ* 2020թ. ապրիլ/ 2020թ. մարտ	*Աճ* 2020թ. ապրիլ/ 2019թ. ապրիլի	**Ընդամենը 2021թ. ապրիլին**	*Աճ* 2021թ.ապրիլ/ 2019թ. ապրիլ
Հանքագործական արդյունաբերություն	**11.0**	0.1	1.4	**10.9**	1.4
Մշակող արդյունաբերություն, *որից*	**59.9**	-11.4	-8.9	**69.9**	1.1
Սննդամթերքի արտադրություն	**20.8**	-0.6	0.0	**20.9**	0.1
Խմիչքների արտադրություն	**7.0**	-0.3	-0.1	**7.1**	-0.1
Ծխախոտի արտադրություն	**4.4**	-0.1	0.1	**4.1**	-0.1
Հիմնային մետաղների արտադրություն	**4.5**	-0.2	0.1	**4.3**	-0.2
Հագուստի արտադրություն	**2.4**	-6.1	-5.4	**9.1**	1.3

Աղբյուր՝ ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտե

41. Առևտրի ոլորտում 2020 թվականի ապրիլ ամսին 2019 թվականի նույն ամսվա համեմատ գրանցվել է աշխատողների թվաքանակի զգալի կրճատում (-10.3%):

Գրաֆիկ 2.34
Առևտրի ոլորտում աշխատատեղերի թվաքանակը և աճը, ամիսը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ



Աղբյուր՝ ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտե

42. ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն՝ 2020 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 189,716 դրամ՝ աճելով նախորդ տարվա նկատմամբ 3.9%-ով: Ի հեճուկս 2020 թվականի ապրիլին աշխատողների թվաքանակի զգալի կրճատման, միջին ամսական աշխատավարձի մակարդակի նվազում չի գրանցվել: 2020 թվականի ապրիլին 2019 թվականի նույն ամսվա նկատմամբ աճը

միայն դանդաղել է՝ կազմելով 2.3%, մարտ ամսվա 8.6% աճի դիմաց: Աճի արագացումը վերականգնվել է միայն հուլիս ամսին, երբ որոշակիորեն հանվել են սահմանափակումները և ի հայտ են եկել պետական աջակցության միջոցառումների դրական ազդեցությունները:

Գրաֆիկ 2.14
Միջին ամսական աշխատավարձի մակարդակը և աճը, ամիսը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա

43. 2020 թվականի ապրիլին 2019 թվականի ապրիլի համեմատ և՛ մասնավոր և՛ պետական հատվածում գրանցվել է միջին ամսական աշխատավարձի աճի դանդաղում, ինչը առավելապես կտրուկ է մասնավոր հատվածում: Մասնավորապես, միջին ամսական աշխատավարձի աճը մասնավոր հատվածում 2020 թվականի ապրիլին 2019 թվականի ապրիլի համեմատ կազմել է 1.2%, մարտ ամսվա 7.2% աճի դիմաց:

Գրաֆիկ 2.15
Պետական և մասնավոր հատվածներում միջին ամսական աշխատավարձի աճը, ամիսը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, %



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ տվյալների բազա

44. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության նախնական գնահատման համաձայն՝ 2020 թվականին աշխատանքի արտադրողականության ցուցանիշը կազմել է 6.8 ԱՄՆ դոլար/ժամ՝ աճելով 2019 թվականի նկատմամբ 1.2%-ով: Գնողունակության պարիտետով ճշգրտված արտադրողականության ցուցանիշը կազմել է 21.1 ԱՄՆ դոլար/ժամ, ինչը 2019 թվականի նկատմամբ աճել է 2.3%-ով: Արտադրողականության չափման միավոր է ընտրվել 1 աշխատողի հաշվով 1 ժամում արտադրած ՀՆԱ-ն:

Ներդիր 3. Covid-19 ազդեցությունը աշխատանքի շուկայի վրա

Հայաստանի Ամերիկյան համալսարանի կողմից իրականացվել է հետազոտություն* կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համաճարակի ազդեցությունը աշխատանքի շուկայի վրա գնահատելու համար, որը հիմնված է 5748 հարցումների վրա: Համաձայն վերլուծության արդյունքների.

- Հարցվածների ավելի քան 25%-ը 2020 թվականին կորցրել է աշխատանքը և դա վերագրում է կորոնավիրուսային համաճարակին:
- Հարցվածների 65%-ը գտնում է, որ կորոնավիրուսի բռնկումը, դրա կանխարգելման և վերահսկման միջոցառումները բացասական կամ շատ բացասական ազդեցություն են ունեցել իրենց ֆինանսական վիճակի վրա:
- Հարցվածների շուրջ 17%-ը (ովքեր չեն կորցրել աշխատանքը 2020 թվականին) նշում են, որ աշխատավայրում ավելի քիչ վճարումներ են ունեցել, իսկ հարցվածների 23%-ը նշում է աշխատանքային ժամերի փոփոխության մասին:
- Համաճարակը ազդեցությունը ավելի քիչ է պետական հատվածի վրա:

Հետազոտության շրջանակներում նաև փորձ է կատարվել գնահատել հեռահար աշխատանքի արդյունավետությունը

- Վերոնշյալ հարցմանը մասնակցածների մեծ մասը նշում է, որ աշխատանքը հնարավոր չէ կատարել տանից:
- Աշխատողների մեկ երրորդը նշում է, որ ընդունելի է տանից աշխատելու առաջարկը, իսկ 10-ից մեկը պատրաստ չէ տնից աշխատել:
- Տանից աշխատանքի արտադրողականության առումով աշխատողների շուրջ կեսը նշում է, որ այն հիմնականում արդյունավետ է կամ շատ արդյունավետ, իսկ յուրաքանչյուր չորրորդ հարցվածը նշում է, որ տանից աշխատելը անարդյունավետ է:

* AUA, 2020, The impact of the coronavirus pandemic on the labor market in Armenia

2.6 ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

45. Համաձայն Համաշխարհային բանկի գնահատականների՝ համաճարակի ազդեցությունը կարող է հանգեցնել Հայաստանում[28] 2020 թվականին 2019 թվականի համեմատ ծայրահեղ աղքատության մակարդակի 6 տոկոսային կետով աճին: Համաձայն գնահատականների՝ 2020 թվականին խորացել է նաև անհավասարության մակարդակը, պայմանավորված տնային տնտեսությունների աշխատանքային և ոչ աշխատանքային եկամուտների անհավասար նվազմամբ:[29]

[28] ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից դեռևս չեն հրապարակվել աղքատության 2020 թվականի տվյալները. կհրապարակվեն 2021թ. նոյեմբերին:

[29] Տե՛ս, WB, 2020, Poverty and welfare impacts of COVID-19 and mitigation policies in Armenia:

Աղյուսակ 4. Covid-19 շոկի հնարավոր ազդեցության գնահատականն աղքատության և անհավասարության հիմնական ցուցանիշների վրա 2020 թվական, (2011 ԳՊ)

	Առանց Covid-19 շոկի			Covid-19 շոկով		
	Աղքատության մակարդակ, %	Աղքատության մակարդակի ճեղք	Ջինի գործակից	Աղքատության մակարդակ, %	Աղքատության մակարդակի ճեղք	Ջինի գործակից
1.90 ԱՄՆ դոլար	1.0	0.1		7.1	6.2	
3.20 ԱՄՆ դոլար	6.7	1.4	34.0	16.9	8.3	40.6
5.50 ԱՄՆ դոլար	33.6	8.5		46.0	17.8	

Աղբյուր՝ ՀԲ [3]

46. Ըստ գնահատականների՝ կորոնավիրուսի տնտեսական ցնցումների հետևանքով 2020 թվականին աղքատության շեմից ներքև հայտնվել է 370 հազար մարդ: Ըստ Համաշխարհային Բանկի կանխատեսումների՝ Հայաստանում 2021 թվականից աղքատության մակարդակը հիմնականում կնվազի, սակայն ծայրահեղ աղքատների մակարդակը կմնա գրեթե անփոփոխ:

Աղյուսակ 5. Covid-19 ազդեցությունը բնակչության խմբերի վրա, հազ. մարդ (անցումային մատրիցա*) 2020 թվական.[30]

		Covid-19-ից հետո					
		Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Չափավոր աղքատ	Խոցելի	Միջին խավ	Ընդհանուր
Մինչև Covid-19	Ծայրահեղ աղքատ	**28**	0	0	0	0	28
	Աղքատ	49	**115**	0	0	0	164
	Չափավոր աղքատ	68	128	**581**	0	0	776
	Խոցելի	**51**	**37**	**255**	**925**	0	1 268
	Միջին խավ	**8**	**3**	**13**	111	**505**	639
	Ընդհանուր	203	283	849	1,036	505	2,874

Աղբյուր՝ ՀԲ [3]
* Ծայրահեղ աղքատ-(<1.90 ԱՄՆ դոլար)
Աղքատ-(<3.20 ԱՄՆ դոլար)
Չափավոր աղքատ-(3.20 – 5.50 ԱՄՆ դոլար)
Խոցելի-(5.50 – 10.0ԱՄՆ դոլար)
Միջին խավ-(>10.00 ԱՄՆ դոլար)

[30] Աղքատության մակարդակները արտահայտված են 2011 թ. ԳՊ, ԱՄՆ դոլարով: Անկյունագծային բջիջները ներկայացնում մարդկանց, ովքեր չեն տուժել COVID-19-ից: Կարմիր գույնի բջիջները ներկայացնում են այն մարդկանց ովքեր մինչ COVID-19 չեն եղել աղքատ է, բայց համաճարակից հետո դարձել են աղքատ:

47. Համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքները մեղմելուն ուղղված բոլոր միջոցները, չնայած փոքր չափով, բայց նվազեցրել են աղքատության մակարդակը (COVID-19-ից հետո): Ձեռնարկված բոլոր միջոցները միասին աղքատության մակարդակը նվազեցրել են մոտ 1 տոկոսային կետով, սակայն դրանք ավելի քիչ արդյունավետ են չափավոր աղքատության մակարդակը մեղմելու տեսանկյունից:

2.7 ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

48. Համավարակի սոցիալ–տնտեսական բացասական հետևանքների չեզոքացման նպատակով ՀՀ կառավարության կողմից մշակվել և իրականացվել են 25 ծրագրեր, որոնցից 12–ը «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման» և 13-ը՝ «Կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման»:[31] Տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերի օժանդակության ձևերն են՝ վարկի համաֆինանսավորում, վարկի վերաֆինանսավորում, համաֆինանսավորում, տոկոսադրույքների սուբսիդավորում՝ որոշակի պայմաններով միանվագ դրամաշնորհների տրամադրման միջոցով:

49. Միաժամանակ, ծրագրերի իրականացման նպատակով մշակվել և ընդունվել են մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերի փոփոխություններ, որոնցով տնտեսվարող սուբյեկտների համար սահմանվել են ժամանակավոր որոշակի արտոնություններ և հարկային վճարումների հետաձգումներ, ինչպես նաև աջակցություն է ցուցաբերվել առանձին սոցիալական խմբերի (թոշակառուներ, ուսանողներ և այլն):

50. ՀՀ պետական բյուջեի գումարներից 2020 թվականին 80.8 մլրդ դրամ հատկացվել է կորոնավիրուսի համավարակի կանխարգելմանը, վերահսկմանը, բուժմանը և տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագրերին և 133.7 մլրդ դրամ՝ ռազմական դրությամբ պայմանավորված ծախսերին: Վերջիններիս շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 75.3 մլրդ դրամ և 123.9 մլրդ դրամ, կամ ծրագրված ցուցանիշների 93.3%-ը և 92.7%-ը:[32] 25 մլրդ դրամի չափով, հատկացվել է սոցիալական աջակցության ծրագրերին:

51. ՀՀ կառավարության կողմից իրականացված վերոնշյալ միջոցառումները և դրանց իրականացման նպատակով մշակված օրենսդրական նախաձեռնությունների արդյունքները դրական գնահատականի են արժանացել միջազգային կազմակերպությունների կողմից, որոնք 2020 և 2021 թվականներին Հայաստանին

[31] Տե՛ս, հավելված 1–ը և հավելված 2-ը: Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն «2020 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվություն»:
[32] Տե՛ս, ՀՀ ֆինանսների նախարարություն, «2020 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվություն»:

տրամադրել են ֆինանսական միջոցներ՝ համավարակի և պատերազմի հետևանքների վերացման նպատակով:

52.Ըստ Արժույթի Միջազգային Հիմնադրամի գնահատումների՝ Կառավարությունը նախաձեռնողաբար հակազդել է ճգնաժամին՝ զսպման համատարած միջոցառումների ընդունմամբ աջակցելով առավել տուժած ոլորտների ընկերություններին և խոցելի անհատներին՝ պաշտպանելով մակրոտնտեսական և ֆինանսական կայունությունը: ՀՀ կառավարությունը հավատարիմ է մնացել ներառական ու դիմակայուն աճի խթանմանը և սոցիալական ծախսերի երաշխավորմանն ուղղված շարունակական տնտեսական բարեփոխումներին և պարտքի կայունության միջնաժամկետ նպատակին (միջնաժամկետ հատվածում ակնկալվում է պետական պարտքի նվազում): Դրամավարկային քաղաքականությունն փաստացի եղել է հարմարվողական՝ աջակցելով տնտեսությանը և իրացվելի պահելով բանկային հատվածը: Հայաստանի Կենտրոնական Բանկը արձագանքել է ճգնաժամին՝ հավասարակշռելով գների և ֆինանսական կայունության իր իրավասությունները, իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը և ապահովել շուկայական մեծածավալ իրացվելիություն:[33]

53.Համաշխարհային բանկը, Ասիական զարգացման բանկը և Եվրամիությունը ևս դրական են գնահատել ՀՀ կառավարության կողմից ճգնաժամի հակազդման միջոցառումները, նշելով, որ ճգնաժամի պայմաններում Հայաստանը պահպանել է մակրոտնտեսական ընդհանուր կայունությունը և առողջ արտաքին պայմանները[34], ապահովել պետական բյուջեի թափանցիկության բարձր մակարդակ, գործուն աջակցություն է ցուցաբերել ՓՄՁ-ներին՝ պահպանելով աշխատատեղերը:[35] Դրական գնահատականի են արժանացել նաև առողջապահական և սոցիալական ծառայություններ ապահովման ուղղված ՀՀ կառավարության քայլերը[36]:

54. Ըստ ՀՀ Կենտրոնական Բանկի գնահատումների՝ ՀՀ կառավարության աջակցության ծրագրերը, որոնք ուղղված են եղել ձեռնարկությունների աշխատողների աշխատատեղերը պահպանելուն, էականորեն նվազեցրել են աշխատանքի շուկայում աշխատանք փնտրելու և գտնելու պոտենցիալ անհամապատասխանության խնդիրը, որն առաջանում է տնտեսությունում կառուցվածքային փոփոխությունների դեպքում: Դրա արդյունքում տնտեսական խոր անկման պայմաններում 2020 թվականին գրանցվել է գործազրկության միայն փոքր աճ:[37]

---

[33] Տե՛ս, Արժույթի միջազգային հիմնադրամ, մամլո հաղորդագրություն N20/219, «Հայաստանի Հանրապետության կատարողականի երկրորդ հերթական ստուգման արդյունքների մասին»:
[34] Տե՛ս, Համաշխարհային Բանկ, ապրիլ 2021թ., «Համաշխարհային բանկը Հայաստանում՝ երկրի ընդհանուր նկարագիր»:
[35] Տե՛ս, Եվրոմիություն, մամլո հաղորդագրություն 09.11.2020թ., UNIQUE ID: 201109_1 «Եվրամիությունը տրամադրում է ավելի քան 35 միլիոն եվրո դրամաշնորհ՝ Հայաստանում COVID-19 համաճարակի ազդեցությունը վերացնելու համար՝»:
[36] Տե՛ս, Ասիական Զարգացման Բանկ, հաղորդագրություն 19.08.2020թ., «ԱԶԲ նախագահը և Հայաստանի Հանրապետության վարչապետը քննարկել են COVID-19-ի և ընթացիկ գործընկերության հետ կապված հարցերը»:
[37] Տե՛ս, ՀՀ կենտրոնական բանկ, 2021թ., «Գնաճի հաշվետվություն»:

ԱՄՓՈՓՈՒՄ

2020 թվականի հունվարի 30-ին ԱՀԿ-ն COVID-19-ի բռնկմամբ պայմանավորված հայտարարել է առողջապահության բնագավառում գլոբալ արտակարգ իրավիճակ, իսկ 2020 թվականի մարտի 11–ին՝ համաճարակ:

- Աշխարհի տարբեր հատվածներում (այդ թվում՝ Հայաստանում) կորոնավիրուսի հետևանքով սահմանված ինքնամեկուսացումը և տնտեսական գործունեության որոշ տեսակների սահմանափակումներն իրենց բացասական ազդեցությունն են թողել ինչպես համաշխարհային տնտեսության, այնպես էլ՝ առանձին երկրների տնտեսությունների գրեթե բոլոր ոլորտների վրա, ինչը հատկապես զգալի է զբոսաշրջության, առողջապահության և առևտրի ոլորտներում: Ինչպես համաշխարհային, այնպես էլ Հայաստանի համախառն ներքին արդյունքի անկումը պայմանավորված է և՛ մասնավոր սպառման, և՛ ներդրումների ծավալների կրճատմամբ:

Համաձայն Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) գնահատումների՝ 2020 թվականին աշխարհի համախառն ներքին արդյունքը 2019 թվականի համեմատ նվազել է 3.3%-ով, զարգացած երկրներում՝ 4.7%–ով, իսկ զարգացող երկրներում՝ 2.2%–ով:

Հայաստանի պարագայում կորոնավիրուսի համաճարակի շոկին հաջորդել է արցախյան երկրորդ պատերազի շոկը, որի հետևանքով, Հայաստանի տնտեսությունը առավել մեծ բացասական ազդեցություն է կրել, ինչի արդյունքում համախառն ներքին արդյունքը նվազել է 7.4%-ով: Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության գնահատականների՝ համաճարակի և պատերազմի ագրեգացված բացասական ազդեցությունը Հայաստանի 2020 թվականի ՀՆԱ–ի մակարդակի վրա կազմել է շուրջ 14.0% (կամ մոտավորապես 916.1 մլրդ դրամ 2019 թվականի գներով):

Ըստ միջազգային կազմակերպությունների գնահատումների՝ 2021 թվականին զարգացած երկրներում կանխատեսվում է ՀՆԱ–ի միջինում 5.1% աճ, զարգացող երկրներում՝ միջինում 6.7% աճ: Համաձայն տարբեր աղբյուրների՝ 2021 թվականին կանխատեսվում է Հայաստանի համախառն ներքին արդյունքի 1.0%-ից (Համաշխարհային բանկ) 3.4% աճ (Ասիական զարգացման բանկ): Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կանխատեսման ՀՆԱ աճը կկազմի շուրջ 4.0%:

- Համաշխարհային առևտրի ծավալներն, ապրանքների միջազգային մատակարարման դադարացմանը զուգընթաց, 2020 թվականին կտրուկ նվազել են, ինչը հիմնականում պայմանավորված էր երկրների միջև սահմանների փակմամբ:

Համաձայն ԱՄՀ–ի տվյալների՝ 2020 թվականին համաշխարհային առևտրի ծավալները նախորդ տարվա նկատմամբ նվազել են 8.5%-ով: Համաշխարհային մակարդակում տնտեսական գործունեության սահմանափակումների հետևանքով 2020 թվականին 2019 թվականի համեմատ Հայաստանի ապրանքների ու ծառայությունների արտահանման ու ներմուծման ծավալները նվազել են համապատասխանաբար 34.2%-ով և 33.2%–ով: Կորոնավիրուսի առանձնահատկություններից ելնելով՝ համաճարակի ազդեցությունն առավել բացասաբար է անդրադարձել մարդկային անմիջական շփում պահանջող ծառայությունների, քան ապրանքային պահանջարկի վրա:

ՀՀ ապրանքների ներմուծման ծավալները 2020 թվականին 2019 թվականի համեմատ նվազել են 17.7%–ով: Ըստ ապրանքների լայն տնտեսական (BEC) դասակարգման ներմուծման կառուցվածքի՝ 2020 թվականին կապիտալ ապրանքների ներմուծումը նվազել է 20.2%-ով, միջանկյալ ապրանքների ներմուծումը՝ 8.7%-ով, իսկ վերջնական սպառման ապրանքներինը՝ 27.3%-ով:

- Պայմանավորված կորոնավիրուսի բռնկման հետ՝ համաշխարհային զբոսաշրջության ոլորտը 2020 թվականին ապրել է պատմության մեջ ամենամեծ ճգնաժամը: Համաձայն Միավորված Ազգերի Համաշխարհային Զբոսաշրջային Կազմակերպության (ՄԱՀԶԿ) տվյալների՝ միջազգային զբոսաշրջային հոսքերը 2020 թվականին նախորդ տարվա համեմատ նվազել են 73%-ով: Զբոսաշրջության արտահանման եկամուտների կորուստները գնահատվել են մոտ 1.3 տրլն ԱՄՆ դոլար:

2020 թվականին Հայաստան ժամանած ուղևորների քանակը կազմել է 375 հազար մարդ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 80.2%-ով կամ 1,519 հազ մարդով: Ըստ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության տնտեսական հետազոտությունների կենտրոնի հաշվարկների կորոնավիրուսի բացասական ազդեցության հետևանքով 2020 թվականին զբոսաշրջային հոսքերից ստացված ընդհանուր եկամուտը 2019 թվականի համեմատ նվազել է 80.0%-ով (1.2 մլրդ ԱՄՆ դոլարով)՝ կազմելով 305 մլն ԱՄՆ դոլար:

- Կորոնավիրուսն (Հայաստանի պարագայում՝ նաև երկրորդ արցախյան պատերազմը) իր բացասական ազդեցությունն է ունեցել նաև աշխատանքի շուկայի վրա: Համաձայն Աշխատանքի Միջազգային Կազմակերպության գնահատումների՝ 2020 թվականին 2019 թվականի համեմատ աշխարհում աշխատատեղերը կրճատվել են 114 միլիոնով: Հայաստանում զբաղվածների թվաքանակը 2020 թվականին նախորդ տարվա նկատմամբ նվազել է 1.9%-ով կամ 18.8 հազար մարդով: Գործազրկության մակարդակն աճել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 18.1%:

Հայաստանում աշխատաշուկայի վրա համավարակի բացասական ազդեցությունը նկատելի է դարձել արդեն իսկ 2020 թվականի ապրիլ ամսին: Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վիճակագրության՝ 2020 թվականի ապրիլին զրոյից մեծ հարկման բազա ունեցող աշխատատեղերի թվաքանակը կազմել է 547 հազար մարդ՝ նվազելով նախորդ տարվա ապրիլի համեմատ 47.4 հազարով: Աշխատատեղերի մեծ մասը (27,204 աշխատատեղ) կազմել են ծառայությունների ոլորտի աշխատատեղերը: Առևտրի ոլորտում կրճատվել է 9,249 աշխատատեղ, իսկ արդյունաբերության ոլորտում՝ 7,968:

- Ըստ Համաշխարհային բանկի գնահատականների՝ կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված 2020 թվականին ծայրահեղ աղքատների թվաքանակը 2019 թվականի համեմատ աճել է 13.6%–ից 14.4%–ով:

Համաձայն Համաշխարհային բանկի գնահատականների՝ համաճարակի ազդեցությունը հանգեցրել է Հայաստանում 2020 թվականին 2019 թվականի համեմատ ծայրահեղ աղքատության մակարդակի 6 տոկոսային կետով աճին: Ըստ գնահատականների խորացել է նաև անհավասարության մակարդակը՝ պայմանավորված տնային տնտեսությունների աշխատանքային և ոչ աշխատանքային եկամուտների անհավասար նվազմամբ:

- Կորոնավիրուսը հանգեցրել է պատմության մեջ կրթական համակարգի բնականոն ընթացքի խոշորագույն դադարին: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից իրականացված հետազոտությունների համաձայն՝ «տուժած» աշակերտների աշխատանքային եկամուտները ամբողջ կյանքի ընթացքում կնվազեն 2.5-ից 4.0%–ով: Ըստ ՏՀԶԿ հետազոտությունների՝ 2020 թվականի ուսումնական տարվա մեկ երրորդի կորուստը մինչև դարի վերջ կնվազեցնի ՏՀԶԿ երկրի ՀՆԱ–ն միջինում 1.5%-ով: UNESCO–ի տվյալների համաձայն՝ 2020 թվականի ընթացքում Հայաստանում դպրոցների մասնակի կամ ամբողջական փակման միջին տևողությունը կազմել է 12 շաբաթ, որից ամբողջական փակմանը՝ 9 շաբաթ:

- Համավարակի սոցիալ–տնտեսական բացասական հետևանքների չեզոքացման նպատակով ՀՀ կառավարության կողմից մշակվել են և իրականացվել են 25 ծրագրեր, որոնցից 12–ը «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման» և 13-ը՝ «Կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման»: ՀՀ կառավարության կողմից իրականացված վերոնշյալ միջոցառումները և դրանց իրականացման նպատակով մշակված օրենսդրական նախաձեռնությունների արդյունքները դրական գնահատական են ստացել միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից, որոնք հիմք ընդունելով վերոնշյալ գնահատականները՝ ինչպես 2020, այնպես էլ 2021 թվականներին շարունակել են Հայաստանին ֆինանսական միջոցներ տրամադրել՝ համավարակի և պատերազմի հետևանքների վերացման նպատակով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Ծրագիր		Ծրագրի միջոցառումների նկարագիր և տեսակ	Տարեկան ճշտված պլան, հազար դրամ	Փաստ, հազար դրամ
Միջոցառման համար	Դասիչ			
3-ՐԴ	1224-11002	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառման ծրագրի շրջանակներում ֆինանսական կառույցների սպասարկման վճարների ապահովում **Միջոցառման տեսակը՝** ծառայությունների մատուցում	12,000.0	12,000.0
5-ՐԴ	1224-11003	**Միջոցառման նկարագրությունը՝** Օժանդակել կորոնավիրուսի տարածման հետևանքով ՀՀ առանձին տնտեսավարողների մոտ առաջացած դժվարությունների հետևանքով աշխատատեղերի պահպանությանը **Միջոցառման տեսակը՝** ծառայությունների մատուցում	2,200,000.0	2,165,533.6
2-ՐԴ	1224-11004	**Միջոցառման նկարագրությունը՝** Գյուղատնտեսական կոոպերատիվներին տրամադրվող վարկերի (լիզինգի) տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերի համաֆինանսավորման գործընթացով նախատեսված հավաստագրման դասընթացների աջակցություն **Միջոցառման տեսակը՝** ծառայությունների մատուցում	2,450.0	1,540.0
18-ՐԴ	1224-11005	**Միջոցառման նկարագրությունը՝** Օժանդակել կորոնավիրուսի տարածման հետևանքով ՀՀ առանձին տնտեսավարողների մոտ առաջացած դժվարությունների հետևանքով աշխատատեղերի պահպանությանը **Միջոցառման տեսակը՝** ծառայությունների մատուցում	2,114,000.0	2,113,996.7
19-ՐԴ	1224-11006	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկերի երաշխիքային գումարների տրամադրման ապահովմանը աջակցություն **Միջոցառման տեսակը՝** ծառայությունների մատուցում	187,500.0	187,500.0

Ծրագիր		Ծրագրի միջոցառումների նկարագիր և տեսակ	Տարեկան ճշտված պլան, հազար դրամ	Փաստ, հազար դրամ
Միջոցառման համար	Դասիչ			
21-ՐԴ	1224-11007	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 21-րդ միջոցառման ծրագրի շահառու հանդիսացող տնտեսավարողներին աշխատատեղերի պահպանման նպատակով աջակցության տրամադրում **Միջոցառման տեսակը՝** ծառայությունների մատուցում	2,630,000.0	2,614,916.9
10-ՐԴ	1224-11008	**Միջոցառման նկարագրությունը՝** Օժանդակել կորոնավիրուսի տարածման հետևանքով միկրոձեռնարկատիրությունների մոտ առաջացած դժվարությունների հետևանքով աշխատատեղերի պահպանությանը **Միջոցառման տեսակը՝** ծառայությունների մատուցում	300,000.0	294,684.2
23-ՐԴ	1224-11009	**Միջոցառման նկարագրությունը՝** Զբոսաշրջությանն ուղակիորեն առնչվող առանձին ոլորտների տնտեսավարողներին կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման, գործունեության շարունակակա-նության և աշխատատեղերի պահպանման նպատակով աջակցության տրամադրում **Միջոցառման տեսակը՝** ծառայությունների մատուցում	3,300,000.0	2,399,890.3
1-ԻՆ	1224-11001	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի (COVID-19) վարակման կանխարգելման նպատակով մեկուսացման մեջ գտնվող անձանց կեցության ապահովում **Միջոցառման տեսակը՝** ծառայությունների մատուցում	5,020,489.6	4,566,972.3
	1224-12001	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով մատչելի պայմաններով վարկերի տրամադրում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	3,500,000.0	2,318,075.4
	1224-12002	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով օժանդակության տրամադրում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	343,839.3	-

Ծրագիր		Ծրագրի միջոցառումների նկարագիր և տեսակ	Տարեկան ճշտված պլան, հազար դրամ	Փաստ, հազար դրամ
Միջոցառման համար	Դասիչ			
	1224-12003	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների մեղմման նպատակով աշնանացան ցորենի սերմերի գնի մասնակի սուբսիդավորում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	299,700.0	194,394.2
	1224-12004	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների մեղմման նպատակով աշնանացան ցորենի սերմերի գնի մասնակի փոխհատուցում **Միջոցառման տեսակը՝** վարկերի տրամադրում	15,000.0	-
24-ՐԴ	1224-12005	**Միջոցառման նկարագրությունը՝** Կոնյակի սպիրտ և շշալցված կոնյակ իրացնող (հարյուր հազար լիտրից ավելի) տնտեսավարող սուբյեկտներին պետական տուրքի գծով կատարված վճարների փոխհատուցում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	350,000.0	274,280.0
25-ՐԴ	1224-12006	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տարածման հետևանքով տուժած զբոսաշրջության ոլորտը սպասարկող տրանսպորտային ընկերությունների գործող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	250,000.0	36,134.7
24-ՐԴ	1224-12007	**Միջոցառման նկարագրությունը՝** Վայոց ձորի մարզի խաղող մթերող (գնող) տնտեսվարող սուբյեկտին մթերված խաղողի գնի սուբսիդավորում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	280,000.0	258,714.1
ԸՆԴԱՄԵՆԸ			**20,804,978.9**	**17,438,632.4**

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՂՈՔԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Ծրագիր		Ծրագրի միջոցառումների նկարագիր և տեսակ	Տարեկան ճշտված պլան, հազար դրամ	Փաստ, հազար դրամ
Միջոցառման համար	Դասիչ			
4-ՐԴ	**1225-2001**	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի հետևանքով 2020 թվականի մարտի 13-ից մինչև մարտի 25-ը ընկած ժամանակահատվածում աշխատանքը կորցրած՝ մինչև 14 տարեկան երեխաներ խնամող ընտանիքներին հրատապ դրամական աջակցության տրամադրում չորրորդ միջոցառում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	190,400.0	182,000.0
4-ՐԴ	**1225-2002**	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով օժանդակել ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքներով ընտանիքների առջև ծառացած սոցիալական խնդիրների բացասական հետևանքների մեղմանը **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	134,575.5	291.5
6-ՐԴ	**1225-2003**	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած ՀՀ քաղաքացիներին աջակցություն **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	518,416.0	505,036.0
7-ՐԴ	**1225-2004**	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով օժանդակել ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքներով ընտանիքների առջև ծառայած սոցիալական խնդիրների բացասական հետևանքների մեղմանը **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	935,000.0	933,572.5
14-ՐԴ	**1225-2005**	**Միջոցառման նկարագրությունը՝** Օժանդակություն կորոնավիրուսի տարածման հետևանքով ՀՀ բարձրագույն և հետբուհական ուսումնական հաստատություններում սովորող ՀՀ քաղաքացիներին **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	914,068.4	808,362.3

Ծրագիր		Ծրագրի միջոցառումների նկարագիր և տեսակ	Տարեկան ճշտված պլան, հազար դրամ	Փաստ, հազար դրամ
Միջոցառման համար	Դասիչ			
15-ՐԴ	1225-2006	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնհինգերորդ միջոցառման շրջանակներում գետերի առափնյա հատվածներում ծառատնկման աշխատանքների իրականացում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	200,000.0	145,882.9
11-ՐԴ	1225-2007	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյուքնում սոցիալական խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլեկտրական էներգիայի դիմաց վճարի 50-%-ի չափով աջակցության տրամադրում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	786,219.4	786,219.3
12-ՐԴ	1225-2008	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյուքնում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 30-%-ի չափով աջակցության տրամադրում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	1,842,928.8	1,842,928.7
16-ՐԴ	1225-2009	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի, էլ. էներգիայի և խմելու ջրի դիմաց վճարի 30-50%-ի չափով աջակցության տրամադրում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	2,145,656.6	2,145,656.4
8-ՐԴ	1225-2010	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տարածման հետևանքով մանավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին միանվագ դրամական օժանդակության տրամադրում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	9,229,339.7	8,953,170.9

Ծրագիր		Ծրագրի միջոցառումների նկարագիր և տեսակ	Տարեկան ճշտված պլան, հազար դրամ	Փաստ, հազար դրամ
Միջոցառման համար	Դասիչ			
9-ՐԴ	1225-12011	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյուքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին միանվագ դրամական օժանդակության տրամադրում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	5,289,426.5	4,748,904.0
13-ՐԴ	1225-2012	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյուքում սոցիալական խնդիրների առջև կանգնած սոցիալապես անապահով ընտանիքներին միանվագ դրամական օժանդակության տրամադրում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	1,221,312.0	1,207,800.4
20-ՐԴ	1225-2013	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին, քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին միանվագ դրամական օժանդակության տրամադրում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	3,087,744.0	3,050,208.0
22-ՐԴ	1225-2014	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսի տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվա-ությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած ՀՀ քաղաքացիներին միանվագ դրամական օժանդակության տրամադրում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	384,000.0	342,720.0
ԳՆՈՒՄՆԵՐ	1225-2015	**Միջոցառման նկարագրությունը՝** Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) վարակի տարածումը կանխարգելելու նպատակով ուսումնական հաստատություններին ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ պարագաներով ապահովում **Միջոցառման տեսակը՝** տրանսֆերտների տրամադրում	646,787.5	268,633.5
ԸՆԴՀԱՆՈՒՐ			**27,525,874.4**	**25,921,386.5**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- IMF, April 2021, World Economic Outlook. Managing Divergent Recoveries
- IMF, January 2021, World Economic Outlook update
- IMF, October 2020, World Economic Outlook: A Long and Difficult Ascent
- WB, 2021, Global Economic Prospects
- UNWTO, January 2021, COVID-19 AND TOURISM 2020: A year in review
- ILO, January 2021, ILO Monitor: COVID-19 and the world of work. Seventh edition
- UN, 2020, Brief#2: putting the un framework for socio-economic response to covid-19 into action: insights
- WB, 2021, Updated estimates of the impact of COVID-19 on global poverty: Looking back at 2020 and the outlook for 2021
- Hanushek, Eric A., Guido Schwerdt, Simon Wiederhold, Ludger Woessmann, 2015, "Returns to Skills around the World: Evidence from PIAAC", European Economic Review
- Woessmann, Ludger, 2016, "The Economic Case for Education", Education Economics
- UNDP, 2020, The Covid-19 Socio-Economic Impact Assessment Report
- IMF, December 2020, IMF Country Report No. 20/318
- WB, 2020, Poverty and welfare impacts of COVID-19 and mitigation policies in Armenia
- Արժույթի միջազգային հիմնադրամ, մամլո հաղորդագրություն N20/219, «Հայաստանի Հանրապետության կատարողականի երկրորդ հերթական ստուգման արդյունքների մասին»
- Համաշխարհային Բանկ, ապրիլ 2021թ., «Համաշխարհային բանկը Հայաստանում՝ երկրի ընդհանուր նկարագիր»
- Եվրոմիություն, մամլո հաղորդագրություն 09.11.2020թ., UNIQUE ID: 201109_1, «Եվրամիությունը տրամադրում է ավելի քան 35 միլիոն եվրո դրամաշնորհ՝ Հայաստանում COVID-19 համաճարակի ազդեցությունը վերացնելու համար»
- Ասիական Զարգացման Բանկ, հաղորդագրություն 19.08.2020թ., «ԱԶԲ նախագահը և Հայաստանի Հանրապետության վարչապետը քննարկել են COVID-19-ի և ընթացիկ գործընկերության հետ կապված հարցերը»
- ՀՀ կենտրոնական բանկ, 2021թ., «Գնաճի հաշվետվություն»

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1) ԱՄՀ [1]– IMF, January 2021, World economic outlook update
2) ԱՄՀ [2]– IMF, April 2021, World economic outlook, Managing Divergent Recoveries
3) ՀԲ [1]– CPB Netherlands Bureau for Economic Policy Analysis; World Bank; World Trade Organization
4) ՄԱՀԶԿ [1]– UNWTO, January 2021, Covid-19 and tourism 2020: A year in review
5) ԱՄԿ [1]– ILO, January 2021, ILO Monitor: COVID-19 and the world of work. Seventh edition
6) ՀԲ [2]– Lakner et al (2020), PovcalNet, Global Economic Prospects
7) ՄԱԶԾ [1]– Human Development Report Office, International Telecommunications Union, the United Nations Educational, Scientific and Cultural Organization Institute for Statistics, and the World Health Organization.
8) ՀԲ [3]– WB, 2020, Poverty and welfare impacts of COVID-19 and mitigation policies in Armenia